№ 90 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 1 — 1909 — ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 1 № 90

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Базарная уп. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴՐԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

(37-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամս. 10 բուբ., 11 ամս. 10 բ., 10 ամս. 9 բ., 9 ամս. 8 բ., 7 և 6 ամս. 6 բ., 5 ամս. 5 բ., 4 ամս. 4 բ., 3 ամս. 3 բ., 2 ամս. 2 բ., 1 ամս. 80 կ. և առաքման ծախք՝ 20 կ.: Ամերիկա տարեկան 6 դոլլար, Եւրոպա 30 ֆրանկ, Պարսկաստան 10 բուբլի, Թիւրքիա 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Ապրիլի 28-ին, երկարաև և ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց
Դաստաստանական պալատի դատախազի օգնական
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԻՍԱՀԱԿՈՎԻՉ ՊՕՊՈՎԸ,
որի մասին խորին կսկիծով յայտնում է ազգականներին, ծանօթներին և ծառայակից ընկերներին հանգուցեալի քոյրը՝ Վարվառէ Իսահակօվնա Յովհաննիսեանը իր ամուսնու և որդկերանց հետ: Աւրիծքը շաբաթ, մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին: Յուղարկաւորութիւնը կիրակի, մայիսի 3-ին, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից (Պասկեվիչա փող., № 1, նահանգ. վարչ. մօտ) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Վերայի գերեզմանատանը:
371. 3—1

Ապրիլի 28-ին, երկարաև և ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց
Դաստաստանական պալատի դատախազի օգնական
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԻՍԱՀԱԿՈՎԻՉ ՊՕՊՈՎԸ,
որի մասին խորին կսկիծով յայտնում են ազգականներին, ծանօթներին և ծառայակից ընկերներին հանգուցեալի քեռին՝ Եգոր Իվանովիչ Փուղինանը և մօրաքոյրը՝ Սառա Իվանովնա Թումանեանը իր աղջկերանցով: Աւրիծքը շաբաթ, մայիսի 2-ին, երեկոյեան ժամը 7-ին: Յուղարկաւորութիւնը կիրակի, մայիսի 3-ին, առաւօտեան ժամը 10-ին իր բնակարանից (Պասկեվիչա փողոց, № 1, նահանգ. վարչ. մօտ) դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Վերայի գերեզմանատանը:
372. 3—1

Զորեքշաբթի, մայիսի 6-ին
Նորին Կայսերական Մեծութեան Կովկասեան Փոխարքայի պալատում
ՍՏԱՏՍ-ԴԱՄԱ ԿՈՄՍՈՒՀԻ Ե. Ա. ՎՈՐՈՆՑՈՎԱ-ԴԱՇԿՈՎԱՅԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԿԱՑԵՑՆՈՒՑ
ՊԱՐԵՐԵԿՈՅԹ ԵՒ ԶԲՕՍԱՆՔ
ՊԱԼԱՏԻ ԱՅԳՈՒՄ
Թիֆլիսում դժբաղդ դէպքերի ժամանակ շուտափոյթ օգնութիւն ծառայելու համար ֆոնդ կազմելու օգտին:
Մուտքի սահմանափակ թիվ կազմված տոմսակների արժէքն է 3 ր.:
Այն անձերը, որոնք սկզբից ձեռք են բերել տոմսակներ և վճարել արժէքը, կարող են ձրիաբար ստանալ նոցերը: Նրանք, որոնք կամենում են այժմ ձեռք բերել, թող բարեհաճեն դիմել պալատ՝ ցերեկվայ ժամը 2-ից մինչև 5 ը, կամ՝ կոմենդանտի վարչութիւնը և կամ թէ Փոխարքայի դիւանատան էկզեկուտոր Շօտնիելին (Պետրոս Մեծի փող., № 8), առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 8-ը:
Այն անձերը, որոնց ուղարկված են տոմսակներ, թէ յարմարութեան և թէ մուտքի ժամանակ կանգ չառնելու տեսակէտից՝ թող շուտպէն վաղօրօք ուղարկել փողը պալատ՝ Վ. Մ. Պուշչինին:
(ա. օ.) (առ) 365. 6—2

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՕՍՖՕՐԻ ԱՓԵՐԻՑ

Ազատարար բանակը Պօլսի դռների առաջ

Կ. Պոլիս, 8 ապրիլի

Պոլիսն ապրում է անկարգրելի օրեր: Մի անաւոր անորոշութիւն գերագրգռել է բազմացեղ ու բազմալեզու ազգաբնակութիւնը: Օրերն ու ժամերը յղի են անակնկալներով: Մակեդոնիայի 2-րդ և 3-րդ ազատական զօրաբաժինները, «Իթթիհադը» և մանաւանդ սահմանադրութեան հացված մահացու հարուածից ծառացած, հև ի հև հասել են արդէն Կ. Պոլսի դռների առաջ և բանակ դրել պատմական Սան-Ստեֆանոյում, որ դառնում է կրկնապէս յիշատակելի ու պատմական:

Եըլդզի կարմիր բորենին ընկել է իր լարած թակարդի մէջ և այս անգամ հազիւ թէ կարողանայ ազատվել: Խնդիրը գրված է առանց այլևայլութեան, կարճ ու կտրուկ. դահրնկէցութիւն:

Զօրքերը այդ են պահանջում: Բայց հրևակայուն էք տապալումը մի թագակիր գլխի, որը ոչ միայն աշխարհական, այլ և կրօնական իշխանութեան պետ է, որը ոչ միայն փադիշահ է, այլ և խալիֆա: Թիւրք ազէպ, մոլեռանդ մասսայի աչքում կրկնապէս նուիրական է նա: Coup d'etat-ի նախորդ ուրբաթը գնացել էի սելամլըկի: Հանդիստես էր ահագին բազմութիւն: Երբ Աբդիւլ-Համիդ՝ իր սովորական շքով՝ ուրբաթի աղօթքը Եըլդզի հանդիպակաց մզկիթում կատարելուց և վերադառնալուց յետոյ երեաց պալատի պատուհանում, շուրջս լսեցի փառաբանութեան ու հրճուանքի մրմունջներ: Հաւատացեալները օրհնում էին Ալլահին, երջանիկ էին զգում իրանց, որ կարողանում են տեսնել, և այնքան մօտից, խալիֆային: Աբդիւլ-Համիդը, հակառակ իր ներօնեան նկարագրին, շատ աւելի հմայիչ, հրապուրիչ է այդ անգիտակից մասսաների համար, քան որևէ սուլթան, որովհետև նա ապրել է խորհրդաւոր կեանքով, չէ երևացել հասարակ մահկանացուներին:

Այդ քսմնելի մրմունջներից, էքստազի յատիշակցութեան այդ հառաչանքներից յետոյ է, որ զգացի, թէ որքան խոշոր ու բարդ հարց է Աբդիւլ-Համիդի գահընկէցութիւնը: Ահա հէնց դրա համար է, որ «Իթթիհադը» առաջին անգամ, յուլիսի 11-ին, չունեցաւ այսօրվայ արիութիւնը:

Բայց այսօր, յենված բիւրաւոր կտրիճ ու վճռական զինուորների աջակցութեան վրա, դէն է շպրտում իր երկվայ վարանքն ու վերապահութիւնը, լուծելու համար դաւաճանութեան վրէժը:

Եւ սակայն, արդարագործ ու անհրաժեշտ վախճանը ձգձգվում է: Երեք օր է, որ մայրաքաղաքը՝ նախ խուլ ու խեղդված շշուկներով, յետոյ հետզհետէ բարձրաձայն խօսում է և սպասում վաղրի օրհասին, բայց այդ օրհասը, այդ վախճանը ընկրկում է, ուշանում: Ու նախկին խանդավառութեան յաջորդել է մի մռայլ լռում: Մարդկային նեարդները հասել են պայթման ասպիճաններին: Լրագիրների յաւելուածները, բազմաթիւ, բազմալեզու, բայց յաճախ դատարկ ու բաց թողնված միայն շաղիտութեան համար, խլվում են ձեռքից ձեռք ու աւելի մտքակում, զայրացնում ջղայնութիւնը:

Աբդիւլ-Համիդը, ինչ ասել կուզէ, մտադիր չէ երևում անձնատուր լինել հեշտութեամբ: Ազատութեան զօրքերը, ինչպէս կանոնաւոր պատերազմի ժամանակ, պաշարում են քաղաքը դանդաղօրէն, յամբօրէն, ռազմագիտական մեթոդներով. նրանց նպատակն է օղակի մէջ առնել բռնակալութեան ամրոցը, անհնարութեան մատնելով որևէ ընդդիմութիւն:

Սան-Ստեֆանոն, ուր գտնվում է սահմանադրական բանակի առաջապահ մասը, դարձել է ուխտատեղի: Հաղարաւոր մարդիկ գնում են իրանց աչքով տեսնելու այդ քաջերին, որոնք եկել են արձակելու գերված ազատութիւնը:

Գնում են ազատութեան բարեկամներն, ինչպէս թշնամիները: Բռնակալութիւնը, որ գլուխ էր բարձրացրել coup d'etat-ի առաջին օրերում, ոտքի հանել լրտեսների և գաղտնի գործակալների մի ամբողջ լեգէօն, սարսափահար է եղել և գործ է դնում յուսահատ ճիգեր իր գրաւած դիրքերը պահպանելու համար: Նա աշխատում է մոլեռանդութեան և փողի ոյժով կաշառել նաև Սելանիկի ազատարար բանակը: Բայց Համիդը տանուլ է տուել խաղը վերջնականապէս և անհնար է, որ ունենայ որևէ, նոյնիսկ ամենաչնչին աջողութիւն: Սան-Ստեֆանոյում արդոսեան աչքերով հսկում են այցելուների վրա և իսկոյն ձերբակալում կասկածելի անձնաւորութիւններին: Տեղի է ունենում մի իսկական որս հոգևորականների: Հէնց որ պատահում են սպիտակ կամ կանաչ փաթթոցաւորների, անմիջապէս հիրընկալում են, շուաքի տակ դնում...

Պատմեմ, ի միջի այլոց, երկու միջադէպ:

Մի սօֆթա գնում է Սան-Ստեֆանօ: Հէնց որ ցած է գալիս գնացքից, բռնում են նրան և խուզարկում: Գտնում են նրա մօտ մի ատրճանակ, փամփուշտներ և դաշոյն:

— Դու Ալլահի պաշտօնեայ ես, ինչ գործ ունի քեզ մօտ զէնքը... Ատրճանակի ու դաշոյնի փոխարէն դու պէտք է կրես սուրբ գիրք...

Սօֆթան կակազում է. պատասխան չէ գտնում: Տփում են նրան ու գցում ժամանակաւորապէս պատրաստված բանտը:

Մի ուրիշ անգամ Սան-Ստեֆանօ են գնում մի քանի մօլլաներ: Նրանցից մէկը երբ նկատում է, որ իր ընկերները հազիւ ոտք կոխած կայարան՝ ձերբակալվում են, գնացքից չիջած, քանդում է իսկոյն իր փաթթոցը և տեղաւորում գրպանում: Դժբաղդաբար դուրս է ծնում փաթթոցի ծայրը: Նկատում են ու կպչում օձիքից:

Ինչու են գնում ազատարար բանակի մօտ այդ սև հոգիները: Կատարելու՝ այն դերը, որ այնքան լաւ աջողվեց նրանց Կ. Պոլսի զօրքերի մօտ. կաշառելու փողով ու մոլեռանդութեամբ: Բայց արթուն հսկում են պաշարման բանակի պետերը: Նրանք ձերբակալում են ոչ միայն հոգևորականներին, այլ և փոքր ի շատէ կասկածելի երևոյթ ունեցող աշխարհականներին:

Գնում եմ և ես տեսնելու այն քաջերին, որոնք դեռ ևս քաղաք չը մտած նոյնիսկ՝ վիրադարձել են հասարակութեանը, մատնելու և քաղաքական գործիչներին ազատութիւնն ու ինքնավարութիւնը:

Սիրքէջիի կայարանում, տոմսակավաճառի դռնակի վրա, կախված է մի յայտարարութիւն՝ ուղղված հասարակութեան, որով երկաթուղային վարչութիւնը, յանուն ազատարար բանակի հրամանատարի, ծանուցանում է, թէ նրանք՝ որոնք որևէ արդարացուցիչ գործով չեն գնում Սան-Ստեֆանո՝ լաւ կանէին տոմսակ չառնել, որովհետև իսկոյն, գնացքից չիջած, ստիպում են վերադառնալ: Ու շատերը հրաժարվում են արդէն իրանց ցանկութիւնից՝ այցելել պատմական արուարձանը:

Պէտք է սպասել գնացքին ամբողջ ժամ ու կէս: Համակերպվում եմ:

Հազիւ գնացքում տեղ բռնած, նոյն գնացքն են մտնում նաև մի քանի հայ կանայք և օրիորդներ: Դրանք «Կարմիր Խաչի Հայ կանանց Ընկերութեան» անդամներն էին, որոնք մի ծաղկեփունջով ու դրօշակով՝ ուղղված բանակի հրամանատարութեան՝ գնում էին յայտնելու, որ իրանք պատրաստ են, պահանջված դէպքում, մատուցանելու իրանց ծառայութիւնը:

Բանի գնացքը մօտենում էր Սան-Ստեֆանոյին, այնքան աճում էր իմ մէջ յուզումը: Մաքրի-գիւղի դաշտերում երևում էին արդէն հատ-հատ, ցրված պահակներ: Առաջիկայ կայարանը Սան-Ստեֆանօն է: Բարձրանում է սուլիչի ձայնը, յամրանում գնացքի անիւների դղրդը, ու մենք անց ազատութեան բանակի առաջապահների դէմ-յանդիման: Երկաթուղու գծի երկարութեամբ շարված են Սելանիկի ժանդարմները, կանաչ հագուստներով, բաց, արտաքին և քաղաքական գործիչներին ազատութիւնն ու ինքնավարութիւնը:

Սիրքէջիի կայարանում, տոմսակավաճառի դռնակի վրա, կախված է մի յայտարարութիւն՝ ուղղված հասարակութեան, որով երկաթուղային վարչութիւնը, յանուն ազատարար բանակի հրամանատարի, ծանուցանում է, թէ նրանք՝ որոնք որևէ արդարացուցիչ գործով չեն գնում Սան-Ստեֆանո՝ լաւ կանէին տոմսակ չառնել, որովհետև իսկոյն, գնացքից չիջած, ստիպում են վերադառնալ: Ու շատերը հրաժարվում են արդէն իրանց ցանկութիւնից՝ այցելել պատմական արուարձանը:

Պէտք է սպասել գնացքին ամբողջ ժամ ու կէս: Համակերպվում եմ:

Հազիւ գնացքում տեղ բռնած, նոյն գնացքն են մտնում նաև մի քանի հայ կանայք և օրիորդներ: Դրանք «Կարմիր Խաչի Հայ կանանց Ընկերութեան» անդամներն էին, որոնք մի ծաղկեփունջով ու դրօշակով՝ ուղղված բանակի հրամանատարութեան՝ գնում էին յայտնելու, որ իրանք պատրաստ են, պահանջված դէպքում, մատուցանելու իրանց ծառայութիւնը:

Բանի գնացքը մօտենում էր Սան-Ստեֆանոյին, այնքան աճում էր իմ մէջ յուզումը: Մաքրի-գիւղի դաշտերում երևում էին արդէն հատ-հատ, ցրված պահակներ: Առաջիկայ կայարանը Սան-Ստեֆանօն է: Բարձրանում է սուլիչի ձայնը, յամրանում գնացքի անիւների դղրդը, ու մենք անց ազատութեան բանակի առաջապահների դէմ-յանդիման: Երկաթուղու գծի երկարութեամբ շարված են Սելանիկի ժանդարմները, կանաչ հագուստներով, բաց, ար-

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԷՄ

Կարգը վերահաստատվեց Թիւրքիայում:

Սահմանադրութիւնը նորից վաւերացվեց և յայտարարվեց իբրև անխախտ պետական հիմնական հաստատութիւն:

Նոր սուլթանը կատարեց զօտեկապութեան պաշտօնական հանդէսը:

Հակայեղափոխական փորձը համարվում է սպառված և դատապարտված, Աբդիւլ-Համիդի դերը վերջացած:

Մենք տրամադիր ենք հաւատալ, որ կարգը՝ գտնվելով վստահելի ձեռքերում, կամրանայ երկրի մէջ և կամաց-կամաց կը վերացնի այն խոչընդոտները, որոնք կանգնած են սահմանադրական զարգացման ճանապարհի վրա. բայց չէ կարելի աչքերը փակել և այն վտանգների վերաբերութեամբ, որոնք պատրաստվում են դաւադրական ջանքերով:

Այն յանկարծական շարժումը, որ մի քանի օրվայ մէջ տապալեց երիտասարդ-թիւրքերի ոյժը և սպառնում էր նորից վերականգնել համիդիական գերիշխանութիւնը, մի դառն փորձ էր և մի անմոռանալի դաս թիւրքական գործողների համար. Եւ անշուշտ՝ ոչ ոք չէ կարող մի բոպէ անգամ կասկածել, որ Հին Թիւրքիայի կողմնակիցները կօգտվեն առաջին իսկ յարմար դէպքից նորից իրանց ձեռքը գցելու իշխանութիւնը:

Դաւադրական ոգին գործում էր Թիւրքիայում նրա սահմանադրութեան առաջին օրերից, և եթէ չը կարողացաւ աջողութիւն ունենալ, դա հետեւանք է այն յուսահատութեան, որին հպտել էր օսմանեան ժողովուրդը Հին Թիւրքիայի վարչական դժոխքի սարսափների մրրիկներում և այլ ևս ոչ մի վստահութիւն չունէր դէպի համիդիական կառավարութիւնը:

Հին Թիւրքիայի կողմնակիցները մեծ հաւատ ունէին իրանց դաւադրութիւնների աջողութեան վրա, բայց սարսափելի պարտութիւն կրեցին և ստիպված եղան տեղատուութեան, սպասելով աւելի բարեյաջող օրերի:

Համիդը և իր կողմնակիցները աչքի ընկնող սառնասրտութեամբ մարսեցին Թիւրքիայի միջազգային վարկը շօշափող այնպիսի խոշոր եղելութիւններ, ինչպէս էին Բոսնիայի և Հերցեգովինայի միացումը, Բոլգարիայի անկախութեան հրատարակութիւնը և ուրիշ քաղաքագիտական անցքեր: Նրանք հաշվում էին Թիւրքական անուան համար աննպաստ քաղաքագիտական հարուածների հետ, որովհետև յոյս էին դրել այն բանի վրա, թէ այդ բոլոր հանգամանքները զրգռիչ ազդեցութիւններ կը թողնեն օսմանեան ժողովրդի վրա և վերջինս ձայն կը բարձրացնի իր իշխանաւորների՝ այն է սահմանադրական գործողների դէմ՝ պահանջելով վերականգնել համիդիական իշխանութիւնը:

Որ օսմանեան ժողովուրդը որոշ ատիճան վիրաւորված էր իրան զգում Աւստրիական և բոլգարական խաղակերպ նուաճումներից—դա բնական և հասկանալի է. բայց անկասկած է և այն, որ օսմանեան ժողովրդի մեծագոյն մասը յանձին իր կուլտուրական գործողների և ղեկավարների ամենեին չէր ցանկանում բօսնիական և բոլգարական վաղուց կորցրած դատի առիթով մատնել իրան նախկին համիդիական դժոխքի սարսափներին:

Այնուամենայնիւ երիտասարդ-թիւրքերը անտես չեն կարող առնել, որ հին բէժիմի կուսակիցները պատրաստ են Թիւրքիայի գլխին ամեն տեսակ փոթորիկներ ժողովել, միայն թէ նորից իրանց ձեռքը գցեն պետութեան դեկը: Դաւադիրները գործում են եռանդուն կերպով երկրի զանազան անկիւններում և զանազան միջոցներով: Օսմանեան սահմանադրութեան ամրապնդումը ժամանակի և մեծ աշխատանքի է դեռ կարօտ:

Ա. Քալանթար

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԷՈՍ II

Երէկ, Վանքի մայր եկեղեցում, տեղի ունեցան հանդիսաւոր պատարագ և ժաղթանք Վեհափառ Մատթէոս Երկրորդի կաթողիկոսութեան հաստատման առիթով: Պատարագիչն էր Թիֆլիսի առաջնորդ Մաթունեան արքեպիսկոպոսը, որը՝ նախ քան Վեհափառին իբրև Մատթէոս II կաթողիկոս յիշատակելը, մի քարող խօսեց օրվայ դէպքի առիթով: Ներկայ էին ծխական դպրոցների և Ներսիսեան դպրանոցի աշակերտներն իրանց ուսուցիչներով և ժողովրդի ներկայացուցիչներ:

—

Ախալցխայից երէկ ստացանք հետեւեալ հեռագիրը.

Այսօր, ապրիլի 30-ին, Ախալցխայի յաջորդութեան կողմից բաղդ ունեցայ հանդիսաւոր պատարագում յիշատակել նոր հաստատված Կաթողիկոս Մատթէոս II-ի անունը և կատարել գոհացողական մաղթանք: Հանդէսը առանձնապէս փայլում էր ժողովրդի ստուար բազմութեան և պետական. պաշտօնեաների ներկայութեամբ:

Սիոն վարդապետ

—

Բարձրագոյն թոյլտուութեամբ Կ. Պոլսի ռուսական դեսպանին յանձնարարված է յայտնել Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեանին, որ Թագաւոր Կայսրը բարեհաճել է հաստատել նրան Աժենայն Հայոց Կաթողիկոսի բարձր պաշտօնում, հրաւիրել մտնել Կովկաս և գալ Պետերբուրգ Նորին Մեծութեանը ներկայանալու համար: Մայիսի 3-ին Էջմիածնից Կ. Պոլիս կը մեկնէ մի պատգամաւորութիւն հայ-լուսաւորչական սինոդի կողմից, որ կաթողիկոսին կուղեկցէ մինչև Էջմիածին: («Կ.»)

ՊԱՐՅԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թաւրիզ, 29 ապրիլի

Ապրիլի 26-ին հրացանի կրակոցից վիրաւորվեց հիւպատոսարանի պահակներից մինի ձեռքը: Կրակեց անյայտ ոմն: Յանցաւորին գտնելու և ձերբակալելու համար ձեռք են առնված եռանդուն միջոցներ:

Թաւրիզը տօնում է շահի հրովարտակով Ֆախկին սահմանադրութեան վերականգնումը: Ռուս պահակի վիրաւորվելը ուրախ տրամադրութիւնը փչացնում է:

Կառավարական նահանգապետի շուտափոյթ նշանակումը անհրաժեշտ է անիշխանութեան առաջն առնելու համար:

Մինչև օրս Ուրմիայից տեղեկութիւն չը կայ:

Մարանդից տեղեկութիւններ ըստացվեցին, որ Մարանդի նահանգապետ Շուջայի-Նիզամի մարդիկ սկսել են կողոպտուներով զբաղվել. այդ պատճառով գեներալ Մնարսկին այնտեղ մի վաշտ զինուոր ուղարկեց երկու գնդակացիրներով՝ այնտեղ գտնվող զօրամասին օժանդակելու՝ կարգ ու կանոնը վերականգնելու:

(Հ. Գ.)

—

25 ապրիլի

Ռուսաց բանակի Թաւրիզ մտնելու օգուտներից մէկն էլ՝ պստային հաղորդակցութեան վերսկսումն էր: Ամիսների դադարից յետոյ ամսիս 22-ին արտասահմանի պօստը ստացվեց, բերելով իր հետ՝ թէ նոր և թէ ամիսներից ի վեր հաւաքված հին լրագիրներ և նամակներ: Մինչ ամենքս սպասում էինք դրսի աշխարհի նորութիւնները կար-

դալով մոռանալ մեր ցաւերը, մխիթարվել դէթ արտաքին աշխարհի ժողովուրդների բարօրութեան լուրերը լսելով, Ադանան՝ թշուառ ժողովրդի այդ արիւնաթաթաւ քաղաքը՝ մոռացնել տուեց մեր քաշածները։

Իրօ

—

Պետերբուրգում, հասարակական գործիչների ակումբում, արևելագէտ Բօգդանովը կարդացել է մի դասախօսութիւն Պարսկաստանի դրութեան մասին։ Ըստ դասախօսի, սահմանադրական կարգերը այնտեղ չէն իրագործվի, քանի որ սրանք հակառակ են շիաների հաւատքին և նրանց իրական գաղափարներին։ Պարլամենտը կարող է գոյութիւն ունենալ մի պայմանով, որ նա լինի հոգևորականութեան ձեռքին։ Վիճաբանութիւններին մասնակցողներից մէկը մատնացոյց արեց, որ երկրում գոյութիւն չունի ազգային միութեան գաղափարը և բոլոր նահանգները ցոյց են տալիս կենտրօնախոյս ձգտումներ։ Բէֆորմները պէտք է սկսել ուժեղ կենտրօնական վարչութիւն հաստատելով, տալով և տեղական ինքնավարութիւն։ Պ. Ա. Ասրիբէկեանը մատնացուցեց Պարսկաստանի կարևոր նշանակութիւնը Ռուսաստանի համար՝ ռազմական-առևտրական տեսակէտից։ Ատրպատականում բնակող թիւրք ցեղերը, ըստ պ. Ասրիբէկեանի, որոշ ձգտում են ցոյց տալիս միանալու Թիւրքիային։ Ռուսաստանի քաղաքականութիւնը ներկայումս պիտի լինի անփոփոխ պահպանել Պարսկաստանի աշխարհագրական սահմանները։ Հակաճառողներից մէկը հերքում էր այն երկիւղը, որ տածում են շատերը, թէ Թիւրքիան ձգտում է հողեր խլել Պարսկաստանից։ Իրօք, Աբդիւլ-Համիդը աշխատում էր արծարծել պանիսլամական գաղափարը, բայց երբ գլուխ անցան երիտասարդ-թիւրքերը, նրանը իրանց ուշադրութիւնը դարձրին դէպի Եւրոպա։

—

Վիէննայից «Рус. Вѣд.»-ին հեռագրում են. «Լօնդօնից այստեղ հաղորդում են, որ անգլիական մամուլը անվստահութեամբ է վերաբերվում ռուս զօրքերի Պարսկաստան մտնելուն։ Մի քանի լրագիրներ յայտնում են այն կարծիքը, որ անգլօռուս դաշնագրութեան վտանգ է սպառնում, եթէ ռուս զօրքերը երկար ժամանակով մընան Պարսկաստանում»։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Սալոնիկ, 29 ապրիլի

Ապրիլի 26-ի գիշերը ծպտեալ կերպով եկաւ պատգամաւորների պալատի փոխ-նախագահ Թալաթ-բէյը և զիմեց ուղղակի Ալատինի մամարանոցը, ուր զիշերը մնաց, իսկ առաւօտեան մեկնեց Պօլիս։ Նրա միսսիան կայանում է նրանում, որ համոզէ Աբդիւլ-Համիդին յանձնել եւրօպական բանկերում պահվող փողերը։ Միսսիայի հետևանքներն անյայտ են։

Հիւսիսային Ալբանիայից յուզիչ տեղեկութիւններ են ստացվում, թէ ալբանացիները ժողովվում են և խորհրդակցում առաջիկայ գործողութիւնների մասին։ Իպէկի միւթեսարիֆը եկաւ հրահանգներ ստանալու համար։ Ուսկիւբից Պրիզրէն ուղարկվեցին մի քանի թնդանօթներ։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 29 ապրիլի

Պատգամաւորների պալատում վերջացաւ սենատի հաստատման հարցի քննութիւնը։ Սենատորի պաշտօնը ճանաչվեց մինիստրի պաշտօնին ոչ հաւասար։ Սենատորի ռոճիկը որոշվեց 750 ֆունտ։ Անցնելով պալատի հաստատման խնդրին, պալատը որոշեց մինչև տարի վերսկսել իր բիւրօյի ընտրութիւնները։

Վաղը սուլթանը երդւելու է սահմանադրութեանը։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 29 ապրիլի

Այսօր քաղաքի զանազան հրապարակների վրա կախաղան բարձրացրին 24 ֆելդֆեբէլների ու մի զինուորի, նաև մի զինուորական իմամի օֆիցէրների սպանութեան և մարտի 31-ի ապստամբութիւնը ղեկավարելու համար։

Լրագիրների ասելով, այն պալատը, ուր թագնվում է պրինց Բուրհանէդդինը—Աբդիւլ-Համիդի որդին, շրջապատված է ժանդարմներով։

Պալատում քննվում է սահմանադրութիւնը փոփոխելու օրինագիծը։ Որոշվեց, որ սենատի $^{2}/_{3}$ մասը պէտք է բաղկանայ ընտրվող սենատորներից, իսկ $^{1}/_{3}$ մասը 9 տարով նշանակվողներից։ Սենատորների ընդհանուր թիւը պէտք է հաւասարվի պատգամաւորների $^{1}/_{3}$ մասին։ (Հ. Գ.)

—

Նոր կառավարութիւնը, ըստ „Рус. Вѣд.“-ի, սկսում է եռանդուն միջոցներ գործադրել մամուլի դէմ։ Լրագիրներին արգելված է զետեղել «անճիշդ կամ սենսացիօն» (աղմկալից) տեղեկութիւններ, տալ որ և է լուրեր մինիստրական ճգնաժամի մասին, գրել Ադանայում եղածի և զօրքի մասին։ Լրագիրները մի օրինակ պիտի ներկայացնեն գրաքննչին, ապա տարածեն թերթերը։ «Օսմանլի» լրագիրը փակվեց Ադանայի մասին տպված տեղեկութիւնների համար։ Զինուորական մինիստրը հրաման է արձակել գտնել «Իկդամ» և «Ինթենդանտ» («Անկախ») լրագիրների թագնված խմբագիրներին, իբր թէ նրանք են իրանց յօդուածներով առաջացրել մարտի 31-ի յեղաշրջումը։

—

Թիւրքիայի պրօբլէմը զբաղեցնում է ամենքին. ռուս գրագէտների մի խումբ, առաջադիմական բանակից, հրատարակել է մի գիրք, «Թիւրքական ժողովածու» անունով, որը աշխատում է ընորոշել երկրում կատարվող երևոյթները, շարժող մտաւորականական ոյժերը։ Ժողովածուի մէջ հանդէս է եկել և Մահմէդ Շահտախտինսկին, երկրորդ Դումայի անդամը։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Պարիզ, 29 ապրիլի

Պատգամաւոր Կօշէնը յայտնում է, որ հարցապնդում կուղղէ փոքր Ասիայի հայկական կոտորածների մասին։

Պատգամաւորների պալատ։ Պօստային ծառայողների վերաբերեալ սոցիալիստների հարցապնդումը քննելու ժամանակ Բարտուն ասաց, որ պարապմունքները վերսկսվելուց յետոյ պօստային պաշտօնեաները սարքեցին անթոյլատրելի ցոյցեր, բացարձակ գործադուլ պատրաստեցին, յարձակվեցին կառավարութեան և պարլամենտի վրա։ Եթէ թոյլ տրվի ծառայողների ժողովներին բարձրանալ ժողովրդական ներկայացուցչութիւնից, այն ժամանակ ամեն մի իշխանութիւն պէտք է վերանայ։ Եթէ պալատը կը պահանջէ վերջ տալ ձեռք առած միջոցներին, այն դէպքում կաբինէտը միաձայն հրաժարական կը տայ (ծափահարութիւն)

(Հ. Գ.)

—

Պարիզ, 29 ապրիլի

Պօստային ծառայողների գործադուլը առաւօտեան ոչնչով չազդեց պօստի աշխատանքների կանոնաւոր ընթացքի վրա։ Պարիզում, պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, աշխատանքի չեկաւ պօստային պաշտօնեաների միայն մի հինգերորդ մասը։ Լիօնում, Մարսէյլում և Բորդոյում աշխատանքներն ամբողջ օրը ընթանում են միանգամայն նորմալ կերպով. բացակայում են քչերը միայն։ (Հ. Գ.)

—

Մոսկվա, 29 ապրիլի

Մոսկվայում ձերբակալված պարսկական յեղափոխականների պարագլուխ բոլգարացի Պանովը աքսորվելու է արտասահման։ (Հ. Գ.)

—

Զանզիբար (արևմ. Աֆրիկա), 29 ապրիլի

Լէյտենանտ Վանրէնէնը, որ գնացել էր Գուսսօրօ, Զանզիբարից դէպի հիւսիսարևելք յիսուն մղոն հեռաւորութեան վրա՝ 35 տեղացիների և 3 եւրօպացիների հետ ենթարկվեց յարձակման դարանից։ Վանրէնէնը և 11 ոստիկաններ սպանվեցին։

Մայոր Վիլիամսը մեծ զօրամասով ուղարկվեց Կուտու։ Ապստամբութիւնը կրում է տեղական բնաւորութիւն։

(Հ. Գ.)

—

Բէլգրադից հաղորդում են «Г. М.»-ին, որ Բոսնիայի և Հերցեգովինայի սերբ ազգաբնակութեան ներկայացուցիչները հրատարակել են բողոք սերբերի դէմ Խօրվաթիայում ճնշումներ գործադրելու համար, յայտնելով որ այդպիսի հալածանքները ամենից աւելի կարող են հասցնել սերբերին դաւադրութիւնների ու պետական դաւաճանութեան։ Այդ բողոքը, որ բոսնիական սերբերի առաջին հաւաքական քայլն է անենկախայից յետոյ, մեծ անհանգստութիւն է առաջ բերել աւստրիական կառավարչական շրջաններում։

Բոսնիական սերբերի պարագլուխները միևնոյն ժամանակ գնացել են Վիէննա։ Նրանց յանձնարարված է պրոպագանդ մղել խոստացված սահմանադրութիւնը Բոսնիայում մտցնելու անհրաժեշտութեան մասին։ Դրա համար հարկաւոր է, որ սերբ ու խօրվաթ պատգամաւորները հանդէս գան Վիէննայի պարլամենտում միացեալ ոյժերով։

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՋԱՐԴԵՐԻՑ ՀԱՅԱՍՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

—

«Հայաստանի բարեկամների» ընկերութիւնը սրբ Էդուարդ Գրէյից ստացել է նորերս մի նամակ հետևեալ բովանդակութեամբ.

«Կ. Պոլսի բրիտանական դեսպանի հեռագրական հաղորդագրութեան համաձայն, որը հիմված է Մերսինի անգլիական փոխհիւպատոսի տուած տեղեկութիւնների վրա, Զարդերից յետոյ Ադանայում մնացել են 15,000 հոգի և մի քանի հազար որբեր սոսկալի չքաւորութեան մէջ։

«Խանութներն ու ջրաղացները ոչնչացված են, այնպէս որ ոչ մի տեղից կարելի չէ հաց ստանալ։

«Տեղական հիւպատոսի և միսիոնարների կազմած հաշուով, անհրաժեշտ է ամենայն օր հասցնել 200 ֆունտ ստերլինգ դրամական օգնութիւն»։

Սրբ Էդուարդ Գրէյը հրաւիրում է «Հայաստանի բարեկամների» ուշադրութիւնը այդ դժբաղդութեան վրա և խնդրում է համապատասխան միջոցներ ձեռք առնել անդնդի ծայրին գտնվող ՀԱՅԱՍԱԾՆԵՐԻՆ շուտով օգնութիւն հասցնելու համար։ («P.C.»)

«ԹԱՅՄՍԸ» ԵՐԻՏԱՍԱՐԴ-ԹԻՒՐՔԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Ըստ երևոյթին, երիտասարդ-թիւրքերը բացարձակօրէն չեն ցանկանում իրանց ձեռքն առնել պետութեան կառավարութիւնը։ Դրանով է բացատրվում այն փաստը, որ նոր կաբինետի մինիստրներից և ոչ մէկը «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէի առաջադրածը չէ, մինչդեռ մինիստրների օգնականների մեծ մասը այդ կուսակցութեան աչքի ընկնող անդամներից է կազմված։

Այդ առիթով «Թայմս» լրագիրը ասում է հետևեալը.

«Հաւանի թէ մի այդպիսի կոմպրոմիս գործնական հետևանքներ բերի, չը խօսելով դեռ այն մասին, որ դա անհամապատասխան է սահմանադրական սկզբունքներին։ Եթէ մինիստրները չը համաձայնվեն անխօս գործիք լինել իրանց օգնականների ձեռքում, այն ժամանակ, անկասկած, կօնֆլիկտ առաջ կը գայ նրանց և կոմիտէի մէջն։ Եւ կը ստեղծվի հետևեալ դրութիւնը. պատասխանատու կը լինեն մինիստրները, իսկ նրանց օգնականները և երիտասարդ-թիւրք կոմիտէը կիշխեն փաստօրէն։ Այդ էլ հէնց այն չարիքն է, որից հարկաւոր էր որ խուսափէին պարլամենտական հաստատութիւնների ազատ աշխատանքների հնարաւորութեանը հաւատացող թիւրք հայրենասէրները։ Իսկական պարլամենտարիզմը պահանջում է, որ իշխանութեան ու պատասխանատուութեան միջև անխզելի կապ լինի։ Զատել նրանց՝ նշանակում է զրկել սահմանադրութիւնը իր կենսունակութիւնից և իմաստից։

«Շատ կարելի է, որ «Միութիւն և Առաջադիմութիւն» կոմիտէը անկարելի է համարում արձակել իրան և հալվել կառավարութեան շարքերում մինչև Թիւրքիայի այս անցողական շրջանի վերջանալը։ Բայց քանի այդ անտեսանելի իշխանութիւնը գոյութիւն ունի, քանի պետութեան գործերի կառավարութիւնը չէ գտնվում բացառապէս պարլամենտի և նրա վստահութիւնը վայելող մինիստրների իրաւասութեան ներքոյ, — թիւրքական սահմանադրութիւնը չէ կարող համարվել վստահելի ու նորմալ կերպով գործող»։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, 23 ապրիլի

Այսօր ռուսաց Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորօվնայի անուանակոչութեան օրի առիթով ռուսաց բանակում զօրահանդէս և պաշտօնական նախաճաշ տեղի ունեցաւ։ Հրաւիրված էին բոլոր հիւպատոսները, հայոց առաջնորդը, քաղաքապետ Իլչալ-ուլ-Մուլքը (սահմանադրականներից ընտրված) և Էյն-ուդ-Դօվլէի բանակից եկած կօզակների պետ Ամիր-Թումանը։ Ամիր-Թումանը Էյն-ուդ-Դօվլէի բանակից գալով՝ քաղաքի միջով անցաւ, Բաղը խանի ձիաւորների ուղեկցութեամբ մինչև ռուսաց բանակը։

Կառավարական պաշտօնեայի՝ քաղաքի միջով մեծարանքով անցնելը նշան է մարքերի հանդարտութեան և ապագայ հաշտութեան, ևս առաւել, որ Թէհրանից շահից ստացված է մի հեռագիր, որով խոստացվում է ներկայացուցչական ժողով գումարել։ Շահի հեռագրի առիթով այսօր հրավառութիւն է բաղարում։

Օտար միջամտութիւնը կարծէք երկու կողմերին էլ ստիպում է զիջող լինել, թէպէտ չէ կարելի հաւատալ զիջումների անկեղծութեանը։

Էյն-ուդ-Դօվլէն դեռ գտնվում է Վասբինջում իր բանակով։ Այն ենթադրութիւնը, որ նա քաղաք պիտի մտնէր, չարդարացաւ։

Ռուսները զբաղված են իրանց բանակով. քաղաքի ոչ մի գործին նրանք առ այժմ չեն խառնվել։ Ռուսների ներկայութիւնը կարծէք բոլորովին ապահովել է քաղաքացիների կեանքը և գոյքը։ Ապահովութեան համար զանազան թաղեր փոխադրված պարսիկներ և մեծ մասամբ ռուսներ փոխադրվեցին իրանց բնակարանները։ Թէ տան իրեղէններ և թէ վաճառականական ապրանքներ, որոնք թագցված և փոխադրված էին թաղերը, հանվում են թաղատից և փոխադրվում շուկայ։ Բազարը նոյնպէս սկսում է կենդանութեան նշոյլներ ցոյց տալ։

Ռուսների ներկայութիւնը ևս նպաստում է քաղաքի առևտրին։

Զուլֆա-Թաւրիզ գծի վրա էլ երթևեկութիւնը վերսկսվում է։ Ճանապարհի ամբողջ երկարութեամբ, աջ ու ձախից երկ-երկու վերստ լայնութեամբ խճուղին ռուսների հովանաւորութեան տակ է գտնվում։ Բահիմ խանը իր հրոսակներով հեռացաւ Ղարադաղ։ Մինչև Ղարադաղ հասնելը ճանապարհի վրա ընկած գիւղերը կողոպտելով է գնացել։ Մեծ կողոպուտ է տարված Մինավար և Ուլի գիւղերից։ Հայաբնակ Մուժամբար գիւղը Բահիմ խանի հեռանալով վերջին սպառնալիքներից ազատված է զգում իրան։

24 ապրիլի

Այսօր, ի պատիւ անգլիական թղթակից Մուրի, Սաթթար խանը ճաշ տուեց։ Ներկայ են եղել ճաշին, ի միջի այլոց ֆրանսիական, թիւրքական հիւպատոսները և անգլիական փոխ-հիւպատոսը։ Սեղանը անցել է խիստ սիրալիր և բաժակաճառերով։ Թղթակից Մուրը, որ գտնվում էր յեղափոխական կամաւորների շարքերում, այս օրերս պիտի դառնայ հայրենիք։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 20 ապրիլի

Զինուորական շարժումներն ու համիդեան գահընկեցութեան պարագաները այնքան զբաղեցնող էին, որ հնար չեղաւ գիտնալ, թէ ինչ կընէին կիլիկեան հայերը կոտորածներու մէջ։

Այսօր ստուգուած է, որ թիւրքական մոլեռանդութիւնը, արդէն խմորուած լայն ծրագրի մը վրայ, պոռթկացած է՝ փճացնելու կիլիկեան ամենէն բարգաւաճ քաղաքը, որ ցարդ անբռնաբարելի մնացած էր։ Շարժումը, Ադանայէ սկսեալ, տարածուած է ամբողջ Կիլիկիոյ հայութեան վրայ։ Առնուած լուրերուն նայելով, հայերը, առ հարկի, դիմադրութիւն ըրած են տեղ-տեղ, տեղ-տեղ շատ ըուռն կերպով, բայց խուժադուժը, անհամար բազմութիւնով, երեք օր, երեք գիշեր, շրջականերէն քաղաք վաղած զինուորութիւնն ալ իրեն օգնական ունենալով, անշուշտ պիտի փոշիացնէր պատահական ամեն ուժ, ու յաջողած է ընել այդ բանը։ Սուրին, հրացանին չհասած տեղը, իր գործը տեսած է արհեստական հնարքը, հրդեհը,—վերջին միջոց թիւրքական բարբարոսութեան։ Այսպէս, սուր, հրացան, զինուոր, հրդեհ միաժամանակ գործ տեսած են հաւասարապէս։

Առ այժմ եղած կորուստներն են 35,000 հոգի, 3,000,000 ոսկի։ Դիւրութեամբ կը գրեմ այդ թիւերը, իբրև թէ հաշուական գործողութիւն մը կատարած ըլլայի։ Ու չպիտի կրնամ ըսել թէ ինչ դժոխային մի-

---

թուն, ինտելիգենտ դէմքերով, որոնք իրանց յարաշարժ ակնարկներով խուզարկում են գնացքից իջնողներին։ Սրանց և քաղաքի ոստիկանների միջև տարբերութիւնն անսահման է։ Եւ դա շատ հասկանալի է. մեծագոյն մասը օֆիցէրներ են, ծպտված՝ ժանդարմի հագուստի տակ։ Բոլորը կրթված, հաճելի դիմագծեր ունեն. ընդհանրապէս խօսում են ֆրանսերէն, փոխանակ թիւրքերէնի, և վերին աստիճանի քաղաքավարի են։

Կայարանը, շրջակայ սրճարաններն ու պարտէզներն ասեղ ձգելու տեղ չը կայ։ Արհաւիրքի ու մահվան մայրաքաղաքում, ապստամբ և անիշխանական զինուորների կողմից անընդհատ վտանգի տակ գտնվող իթթիհադական օֆիցէրներն ու գործիչները ապաստանել են այստեղ։ Ամեն րոպէ հանդիպատես էք լինում ձեռքի տենդոտ սեղմումների, ողջագուրումների։ Բարեկամներ են, որ, փոթորկից յետոյ, վերագտել են ու շնորհաւորում միմեանց։

Կարմիր Խաչի Հայ Կանանց ընդունում է Կալիբ-բէյ, առաջապահ ոստիկան զօրքերի հրամանատարը։ Երբ ծանկափունջը կանանց կողմից յանձնվում է նրան, մի քանի բառերով, Կալիբ-բէյ, զգալարար յուզված, բանակի անունից շնորհակալութիւն է յայտնում տաք խօսքերով։ Ներկաների միջից մէկը ծափահարում է։ Դա լինում է, կարծես, էլեքտրական այն հոսանքը, որ ցնցում է օֆիցէրին։ Կալիբ-բէյ բարձրանում է խոկոն գնացքի սանդուղի վրա, և շնորհակալութեան մաերիմ խօսքերը փոխվում են հրապարակային ատենաբանութեան։

Նա ասում է, որ մարտի 31-ին փորձեցին դաւաճանօրէն խփել սահմանադրութեանը սրտից, բայց բանակը, ազատութեան պահապանը, հսկում է նրա վրա և թոյլ չէ տալու, որ դաւաճանները գլուխ հանեն իրանց ոճիրը։

Ծափահարութիւնների մի իսկական փոթորիկ ողջունում է այս խրոխտ յայտարարութիւնը։

— Դամրը օլսուն խայիրլէր (Կորչեն դաւաճանները)... Եաշասըն հիւրրիյէթ օրդուսու (Կեցցէ ազատութեան բանակը)...,—բացագանչում են այս ու այն կողմից։

— Դամրը օլսուն Աբդիւլ-Համիդ,—թնդում է մի ձայն։

Ցեղ են դառնում որոնելու այդ արդարագործ աղաղակի հեղինակին։ Մի զինուորական է, մի օֆիցէր։ Այդ բօպէից արդէն զգում եմ, որ հարուածն այս անգամ չէ սխալվելու, չէ մոլորվելու. նա իջնելու է բռնակալութեան ուղղակի արմատին...

— Մենք ամենևին չենք ցանկանում,—շարունակում Կալիբ-բէյ,— որ արիւնհեղութիւն լինի։ Եւ այդ պատճառով էլ շնորհակալութիւն յայտնելով մեր հայ քոյրերին, Կարմիր Խաչի Հայ Կանանց Ընկերութեան ներկայացուցիչներին, յոյս ունենք, որ նրանց ծառայութեան պէտք չենք ունենայ։ Մեր նաւատորմը, որի մասին կասկածներ ու երկիւղներ չենք տածում, այս բօպէիս եկաւ յայտնելու, որ մեզ հետ է, ազատութեան նոյն կուռ համար...

Վերջին խօսքերն առաջ են բերում. խնված հաղարաւոր բազմութեան մէջ անկարագրելի, խելայեղ խանդավառութիւն... Նաւատորմը ազատարար բանակի հետ....

Հէնց այժմ միայն կրծքերն սկսում են լայն շնչել, դէմքերը ծաղկել, հայացքները լուսաւորվել...

Եըլդըզի օձը մաքրուել ու տուել ապստամբ զօրքերի ձեռքով, մի երկու օրվայ ընթացքում, ոչ միայն ցամաքային, այլ և ծովային բանակի սահմանադրական օֆիցէրներին։ Եւ պնդում էին թէ Աբդիւլ Համիդը կարող է վստահել՝ ինչպէս Պօլսի գարնիզօնի, նոյնպէս Բօսֆորի և Ասկեղջիւրի ջրերում խաբսկող մարտանաւերի մեծագոյն մասի հաւատարմութեան վրա։ Սարսափեցնում էր մանաւանդ վիրջին, այն է՝ նաւատորմի դաւաճանութիւնը... Բայց ահա պաշտօնական հաւաստիքը, որ նաւատորմն էլ աջակից է ազատարար բանակին...

Հազիւ Կալիբ-բէյը վերջացրել էր իր ատենախօսութիւնը, երբ մի երիտասարդ օֆիցէր, մօտ 30—35 տարեկան, միջահասակ, սպիտակաւուն մօրուքով, սև, խոր աչքերով, բարեձև ու կրակոտ, ճեղքեց բազմութիւնը և մօտեցաւ հայ կանանց՝ շնորհակալութիւն յայտնելու։ Ձեռքի առաջին սեղմումը տուել էր արդէն, երբ յանկարծ որոտաց մի ինքնաբուղխ ու անդուսպ ճիչ.

— Եաշասը՞ն Էնվէր-բէյ...

Ինձ դժուար է նկարագրել, թէ ինչ կատարվեց այնուհետև։ «Եաշասըն Էնվէր-բէյ» աղաղակը ծաւալվեց, ծովացաւ ու պայթեց օդում, ինչպէս մի թաթառ։ Բազմութիւնը խուժեց դէպի երիտասարդ օֆիցէրը, որ Բերլինի զինուորական կցորդի (ատտաշէ միլիտէր) իր պաշտօնը անմիջապէս լքել էր, Նիազիի հետ վերադարձին նուաճելու համար վտանգված ազատութիւնը։ Ու սկսեցին, ի նշան երախտագիտութեան, համբուրել նրա ձեռքը, ճակատը, ոմանք նոյնիսկ ոտքերը։ Խեղճ երիտասարդն այլ ևս հնարաւորութիւն չունեցաւ շարունակելու և վերջացնելու հայ կանանց ուղղած շնորհակալութիւնը և այն աստիճան նեղվեց իրան ի նպաստ կատարվող երախտագիտութեան անդիմադրելի ցոյցերից, որ ժանդարմներն ստիպվեցին օգնութեան փութալ, ազատելու համար նրան բազմութեան երկրպագու պաշարումից...

Կայարանից դուրս գալով՝ մոայ արուաձանը։ Ամեն կողմ տենդագին շարժում, ամեն կողմ սեանիկեան ժանդարմներ, Ստամբօլից փախած օֆիցէրներ և կամաւորներ, որոնք՝ բոլորն էլ՝ գոհ են, զուարթ։ Այստեղ են նաև պատգամաւորներ, սենատորներ։

Ահա պատգամաւոր Հալաճեանը։

— Հը՛, ինչ լուր, երբ է այս խեղդող ողբերգութեան վերջը,—հարցնում եմ նրան...

— Շատը գնաց, քիչը մնաց,—պատասխանում է ժպտալով.—երկկվանից հատ հատ գալիս են պատգամաւորները։ Գիտէք անշուշտ, որ պարլամենտի նիստերը այստեղ պիտի գումարենք, որպէսզի մեր որոշումները, ծանրակշիռ որոշումներ, կարողանանք տալ առանց ճնշումի... Կան պատգամաւորներ, որոնք դեռ յամառում են մնալ Պօլսում։

— Երևի դրանք այնքան էլ չեն ցանկանում ստանալ անխուսափելի վախճանին, կայացնել խոշոր, կտրուկ որոշումներ ..

— Այո՛... պատգամաւորների բոլորը ազատականներ չեն... Այդ յայտնի եղաւ զինուորական ապստամբութեան յաջորդ օրերում... Բայց դրանք ստիպված են կամ վերջ ի վերջոյ գալ և կամ վտանգել իրանց պատգամաւորի կոչումը... Գիտէք նոր լուրը... Այսօր եկաւ Ահմէդ Բիզան...

— Որտեղից...

— Պօլսից... Նա չէր հեռացել. թագնվել էր մի ծանօթի տան մէջ... Շատ սրտագին ընդունելութիւն կատարեցին նրան... Թեթև սրտով նրա հրաժարականը ընդունողներից շատեր շտապեցին համբուրել նրա ձեռքը։

— Իսկ ձեր նորընտիր նախագահը... Մուստաֆա էֆէնդին... Մթթէ նա կը շարունակէ նախագահ մնալ և զեկավարել այստեղ գումարվող նիստերը։

— Ո՛չ... Այստեղ չենք կարող ընդունել coup d'etat-ի հետևանքները... Այսօր արդէն մի փոքրիկ նիստ ունեցանք, և Մուստաֆա էֆէնդին ինքը հրաժարվեց նախագահութիւնից յօգուտ օրինական նախագահի։

— Ուրեմն մեծ է անհամբեր սպասվող վախճանը...

— Այո՛... Միայն պէտք է քիչ էլ համբերել, մինչև պաշարման բանակը կը կատարէ անհրաժեշտ շարժումները...

Բաժանվում ենք։ Մի քիչ էլ մնա գալուց յետոյ, որովհետև արդէն մօտ է երեկոն, մտնում եմ գնացք վերադառնալու համար Պօլիս։

Բայց ինչ հսկայ է զանազանութիւնը այստեղի և այնտեղի։ Այստեղ մթնոլորտը լիքն է կեանքով, յոյսով ու խանդավառութեամբ։ Իսկ այնտեղ, Եըլդըզի ստորոտում փալարվող ազգարնակութիւնը շնչում է անվստահութիւն, սպանող տարտամութիւն, օլբուն ու երկիւղ...

Arago

ղոցներ գործ դրուած են այդ ապանութեանց մէջ։ Մարդկային գազանութեանց պակն է սա։

Մենք շատ միամիտներ ենք, կուրօրէն տակաւին սա համոզումը ունինք, թէ Համիդը կազմակերպեց այդ ծրագիրը։ Իմ հաշիւովս, ամենքն ալ, իրենց բաժնին մէջ, մէյ-մէկ Համիդներ են։ Ունինք ապուշներ, լրագրողներ, հասարակական գործիչներ, որ հետամուտ են այդ ծրագիրը վիպթիլ անպաշտօն քանի մը անհատներու վիզը, իբրև համիդեան հաւատարիմներ։ Բ. Դուռը Ղարդին մէջ է. կուսակալը, տեղական զինուորութիւնը, երեսելի ըսուածները, առհասարակ, թաթխուած են արիւններուն մէջ։

Պարլամենտի 18-ի նիստին մէջ, մեր երեսփոխաններէն մէկ-երկուքը, Զոհրապ ու Վարդգէս, խօսած են այդ Ղարդի մասին ու գլխաւորաբար մատնիչ ըրած են Ա. գիւլ-բէյ, ներքին գործերու խորհրդականը, որ իր պայմանագրական հեռագրով ճշտած էր թէ կոտորածը ինչպէս պէտք է կատարուի։

Ագիլ, ինքզինքը արդարացնելու համար, կըսէ, թէ Զոհրապը այդ բաները կը խօսի իրեն դէմ սոսկ անձնական թշնամութիւնով. ու երեսփոխանները ծափ կը զարնեն։ Ի՞նչ տարբերութիւն Համիդի ու այդ երեսփոխաններու մէջ։ Համիդը գոնէ հրապարակաւ ծափ չէր զարներ իր ոճիրներուն վրայ, իր ծիծաղն ու ծափը մութին մէջ տեղի կունենային։ Կարնոյ հայ երեսփոխանը, այդ ծափերէն ծայր-աստիճան դգածուած, բեմէն կը պոռայ, թէ «ուրեմն յայտնի դիտաւորութիւն մը, նոյնիսկ այս ժողովին մէջ, հայերը ընաջնջ ընելու։ Եթէ այդպէս է, մենք գործ չունինք այս տեսակ պարլամենտի մէջ»։

Ատոր վրայ՝ քանի մը երեսփոխաններ ցաւ կը յայտնեն կատարուած դէպքերու վրայ և կարծիք կը յայտնեն, թէ գործադիր իշխանութիւնը պէտք է թոյլտուութիւն ստանայ դրամական օգնութիւններ ընելու Ղարդէ զերծ մնացողներուն նպաստ հասցնելու։

Այս Ղարդին մէջ բուն հարցը սա է։ Որովհետև հայերը Կիլիկիոյ մէջ բաւական լաւ դիրքերու տիրացած են, տեղ-տեղ թուական առաւելութիւնն իսկ տեսնուած է, պէտք է ոչնչացնել՝ Ղարդը սկսելով Ադանայէն, ուր հայերու դիրքը, թէ իբրև վաճառական, թէ իբրև գործարանատէր ու հողատէր, գլխաւորաբար աչքի զարնող երևոյթ մը եղած է։

Երեկ յայտնուեցաւ եկած են երեք հեռագիր. 1) թէ Զէյթունը ապստամբած է. Ֆէրման, 2) Զէյթունը գրաւեց շրջակայ գիւղերը. Ֆէրման, 3) Զէյթունը կը քալէ զինուորական ուժին վրայ. Ֆէրման։

Հաւանական կը գտնեմ որ դաւ մը կայ այստեղ ալ։ Ղարդին տպաւորութիւնը տեղմացնելու հնարք մըն է թերևս։ Եւ կամ, առ առաւելն, զէյթունցիները, տեսնելով որ Ղարդը սպառնական երևոյթ մը առացած է, փոխանակ սպասելու որ ամէն տեղ ամայացնէ՝ եռը բոլոր կիլիկեան ուժերը իրենց վրայ թափին, հարկադրուած ըլլան շարժումը ինքնին սկսիլ և թոյլ չտալ, որ թիւրքական խուժանը քանի մը տասնեակ հազարներով հասնի՝ ապաստան գտնելու նոյնիսկ մօտ գտնուած թշնամի գիւղերուն մէջ։ Այնու ամենայնիւ՝ անձնական չեմ գտներ, որ զէյթունցիներ օգնութեան ելլեն իրենց ազգակիցներու, որոնք անիրաւօրէն Ղարդի, կրակի ենթարկուած են։

Այսօր 35,000 հոգիներու կորուստը աչքի առջև եղած ատեն, Բարձր. Դուռը, լրջօրէն, հրահանգ կուտայ իր՝ Եւրոպայի դեսպաններուն հրատարակելու, որ Կիլիկիոյ մէջ հայերը թիւրքերուն դէմ ելած են ու կը Ղարդին գտնուք։ Համիդէն ինչով վար կը մնայ սահմանադրական դահլիճը։

Ահմէդ Բրէյն հրաժարական տուաւ իր նախագահութենէն։ Երեք դիտողութիւն կարելի է ընել. 1) թերևս այդ միջոցով իրաւունք ստանայ ձեռք բերելու վարչապետի պաշտօնը, որ տեղական քանի մը շողոքորթ թերթերու ծրագիրն է. 2) ամօթանար այն անցած գործածներէն՝ որոնք տեղի ունեցան իր անհեռատեսութենը երեսէն, իր թուլութենէն, իր անընդունակութենէն. 3) և կամ իր ունեցած սարսափն, թէ գուցէ, յառաջիկայէն, նմանօրինակ դէպքեր տեղի կունենան այս եղական մայրաքաղաքին մէջ, ու ինքը վրայ տայ շատ թանգագին կեանք մը։

Մեր լրագրութեան մէջ ունինք խմբագրողներ, որոնք զօրաւորին թմբկահարներն են։ Կոմիտէին զուռնաջիները սկսան դարձեալ։ Պէտք է գիտնալ, թէ Սէլանիկի կոմիտէն տարբեր ուժ մըն է. ան կը ներկայացնէ մակեդոնական պետականութիւնը, կազմուած մակեդոնացիներէ։ Իր դաւանութիւնն է հասնիլ, իր ուժերովը, ուր որ վտանգ կայ սահմանադրութեան համար։ Ու հասաւ կրակի արագութիւնով, զարկաւ, գործեց, հասաւ իր նպատակին կարգաւորուած ռազմական օրէնքներով։

Բայց Կ. Պոլսի կոմիտէն, իր գաւառական ունեցած ուժերովը, նախ իբրև քաղաքական-դաղափարական մարմին, շատ անձկամիտ ծրագիր մը ունեցաւ իրեն ուղեցոյց. իբրև կազմակերպութիւն՝ շատ անկերպարան եղաւ. չկրցաւ գիտնալ, թէ ինչ կանցնի կը դառնայ իր բոլորտիքը, և անհատական գործերու խանութեցաւ շատ անպատեհօրէն։

Ու ինչ որ ամենէն աւելի ցաւալին եղաւ, սա է թէ թոյլ տուաւ, որ հին վարչութեան մարդիկ, լրտեսներ, ժուրնալջիներ մուտ գտնեն իր կազմակերպութեան մէջ, մուտ գտնեն պարլամենտի մէջ անոնք, որոնք կոտորածի, թալանի գլխաւոր դերակատարներն էին։ Այդ ուղղութիւնն էր, որ գաւառներու մէջ սա համոզումը առաջ բերաւ, թէ սահմանադրութիւնը բռնապետական տարբեր ձև մըն է, ոչ մէկ բան փոխուած է երկրին մէջ վարչական տեսակէտով, քանի որ ամէն տեղ գործի գլուխ էին զարձեալ հին վարչութեան հաւատարիմներ, հին լրտեսներ։ Շահէն

Յ. Գ.—Զինուորական քանի մը վաշտ դրկուեցաւ Ադանա։ Նոյն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

—

Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան նիստում, որ կայացաւ չորեքշաբթի, ապրիլի 29-ին, տեղի ունեցան հետեւեալ որոշումները.

ա. Իջեցնել տարեկան անդամավճարը 10 ռուբլուց մինչև հինգ ռուբլի։

բ. Անդամներին արտօնութիւն տալ մի տարվայ ընթացքում հատուցանելու անդամավճարը։

գ. Բանալ ընկերութեան կից կոմիտէներ վերաբերեալ գիւղատնտեսութեան զանազան ճիւղերին, այլ և կրեդիտային կազմակերպութիւններին։

դ. Կոմիտէներին իրաւունք տալ ինքնուրոյն կազմակերպվելու և գործելու, ունենալով սեփական հասոյթներ և ծախսարարութիւն։

ե. Կոմիտէներին իրաւունք է տրվում սեփական կնիք ունենալու։

զ. Կոմիտէների հաստատման և գոյութեան համար անհրաժեշտ է առնուազն տասն անդամի մշտական մասնակցութիւն։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ախալցխա, 27 ապրիլի

Ամսիս 26-ին, քաղ. վարչութեան դահլիճում կայացաւ կ. Հ. Բ. Ը. տեղական ճիւղի՝ ամսիս 12-ին կայացած ընդհ. ժողովի շարունակութիւնը հետեւեալ հարցերը քննելու. 1) քննել և հաստատել վարչութեան անցեալ 1908 թ. եւմտի հաշիւը և լսել վերաստուգիչ յանձնաժողովի քննութեան զեկուցագիրը և ապա ընտրել վարչութեան հերթով հեռացող երկու անդամների՝ պ. պ. Աբր. Անխոնեանի և Խորէն Ամարեանի փոխարէն նոր անդամներ և այլ երկու հարցեր։ Ժողովին ներկայ էին հաւիւ 11 անդամներ։ Ժողովում կարդացվեց նախկին ժողովի արձանագրութիւնը և վաւերացվեց։ Ապա կարդացվեց քննիչ-ժանանաժողովի զեկուցումը վարչութեան 1908 թ. գործունէութեան առիթով։ Վարչութեան տեղեկագրից երևում է, որ անցեալ 1908 թ. ընկերութիւնը մուտք է ունեցել հետեւեալ աղբիւրներից. 90 անդամավճարներից 450 ր., նուէրներից 120 ր., ընդամենը 570 ր։ Ելք ունեցել է՝ աղքատների, հիւանդների և այլ մանր ծախսերի՝ ընդամենը 133 ր. 95 կ., մնում է առ ձեռն դրամ 436 ր. 05 կ., որից դուրս գալով ընկ. 5% ֆոնդի փոդը 55 ր.՝ մնում է առ 1-ն յունվարի 1909 թ. պատրաստ դրամ 381 ր. 05 կ., որից 336 ր. 05 կ. գտնվում է պետական խնայող. գանձարանում, իսկ մնացեալ 45 ր. ապառիկ է մնացած անդամավճարներից։ Վերաստուգիչ յանձնաժողովի զեկուցումը հաստատվում է ժողովից։ Ապա տեղի ունեցաւ վարչութեան երկու հեռացող անդամների փոխարէն նոր անդամների ընտրութիւնը։ Թերթիկներով առաջարկվեցին 6 թեկնածուներ, որից 4-ը հրաժարվեցին քուէարկվելուց, ուստի գաղտնի քուէարկութեամբ նոր անդամներ ընտրվեցին պ. պ. Գէորգ Արաբեան և Խ. Թէմիրճեան։ Ժողովի մասցեալ հարցերը յետաձգվեցին։ Մոռացայ յիշելու, որ վարչութեան հեռացող անդամներից Աբ. Անխոնեանին, որ կատարում էր վարչութեան գանձապահի և քարտուղարի պաշտօնները, քննիչ-ժանանաժողովի առաջարկութեամբ ժողովը շնորհակալութիւն յայտնեց նրա պարտաճանաչ և օգտաւէտ գործունէութեան համար։ Ցոյս ունենք, որ վարչութիւնը այս տարի միայն աղքատներին ողորմութիւն տալով չի բաւականանայ... ինչպէս անցեալ տարի էր։ Libre

—

Բաքու, 25 ապրիլի

Մօտիկ անցեալում ոմն Գրիգորեանց առաջարկում է տեղիս ծխատէր Յովհաննէս քահ. Նալբանդեանին՝ ստորագրել իր ծխականներու պակի թղթին։ Ծխատէրը պահանջում է օրիորդի ծննդեան վկայականը, որը չէ ունենում, ուստի քահանան հրաժարվում է պակ կատարելուց։ «Կամ պիտի պակես, կամ էլ թուրքի ժողի պիտի պակել տամ...»—պատասխանում է աղջկայ տէրը։ Քահանան գնում է աղջկայ տունը, որպէսզի գոնէ տեսնէ, թէ աղջկայ հասակը, առողջութիւնը ինչ են վկայում գոնէ արտաքինից։ Աղջկայ տէրերը դրան էլ հակառակում են։ Քահանան ստիպված է լինում յայտարարել, որ ինքը թէ այդպիսի ծխականից է հրաժարվում, թէ պակից, նիւթական օգտից։ Երեկոյեան չորս երիտասարդներ, ինչպէս պատմում են, զինված մտնում են քահանայի բնակարանի պատշգամբը և պահանջում են գալ ու պակի վկայականին ստորագրել։ Տէր հօր բնակարանում պատահմամբ գտնվող մի երիտասարդ պարոն մի կերպ հեռացնում է այդ «զօչինարին»։ Մի ժամ չանցած՝ ահա երկու թիկնապահներով գալիս է մի այլ պարոն, հոտաւէտ իւղով միրուքը և մազերը օծած, լաւ, եւրոպական ճաշակով հագնված, և առաջին քայլից ասում է.

— Առաջարկում եմ ստորագրել պակի վկայականին, թէ չէ չորս օրվայ ընթացքում կարգալոյծ կանեմ, վերարկուդ կը հանեմ...

— Պարոն,—պատասխանում է քահանան,—ես օրէնքից շեղվել չեմ կարող. առանց ծննդեան վկայականի չեմ ստորագրի. և վերջապէս դու իմ կաթողիկոսն ես, որ վերարկուս հանես։

Երկար վիճաբանութիւնից յետոյ քահ. ստիպված է լինում երկիւղից անցնել միւս սենեակը, որը պարոնին ասիթ է տալիս դիտել տիրուհուն։

— Դուք էք տէրտէրկինը. ես ձեր ամուսնուն կը խայտառակեմ, փիլոնը կը հանեմ... կը տեսնէք ինչ կանեմ...» և այլ վայր ի վերոյ խօսքեր։

Տէրտէրը, համբերութիւնից դուրս գալով, նորից վերադառնում է սենեակ և հայհոյանք տալով դուրս է անում սպառնացող պարոնին, որը և դիմում է կօնսիստորիային՝ պահանջելով կարգազուրկ անել իրան հայհոյող և անից դուրս անող քահանային։ Թէ քննութիւնը ինչ հետևանք կունենայ՝ այդ մեզ չէ հետաքրքրում, այլ հետաքրքրականն այն է, թէ որքան ապականված են մեր բարքերը, դատի ենք հրաւիրում այն քահանային, որը չէ ուզում շեղվել իր իշխանաւորի պահանջից։

Դժուար դրութեան մէջ են նաև մեր բժիշկները։ Անցեալում մի երիտասարդ, որը պիտի պակվի, բայց որովհետև առողջութեան համար բժշկական վկայական է հարկաւոր, փամփուշտակալը և ատրճանակը մէջքին կապած գնում է բժ. Տ.-ների մօտ և պահանջում վկայական։ Բժիշկը ուզում է քննել, ստուգել առողջութիւնը, սակայն երիտասարդը չէ թոյլ տալիս, այլ «վկայական եմ ուզում» ասելով ատէպ-ատէպ ցոյց է տալիս ատրճանակի ծայրը։

Ցանկալի է, որ հոգ. իշխ. աղջկայ ծնողքեան վկայականը պահանջել տայ տղայի տիրոջից, իսկ տղայի բժշկական վկայականը՝ աղջկայ տիրոջից։ Ս. Գարագաշ

—

Փանիկ, 23 ապրիլի

Փանիկը Սուրմալուի հայկական գիւղերից մէկն է։ Նրա բնակիչների թիւը հասնում է 1400—1500-ի. գաւառիս 22 հայաբնակ գիւղերը բնակիչների քանակութեամբ կարելի է բաժանել երեք կարգի՝ մեծերի, միջակների և փոքրերի։ Փանիկը պատկանում է միջակների կարգին։ Ինչպէս տեսնում ենք, բնակչութիւնը Փանիկում բաւականին պատկառելի թիւ է կազմում. այսպիսի մի գիւղում դպրոց ունենալը ոչ միայն կարեւոր է, այլ նոյնիսկ անհրաժեշտ. չը նայած դրան, մինչև օրս էլ Փանիկը զուրկ է որևէ կուլտուրական հիմնարկութիւնից, մինչդեռ նրանից աւելի փոքր գիւղերը, որոնք են՝ Հալվերիսը, Ալէթլուն, Ալիզամարլուն, Զաքսլուն, տարիներից ի վեր ունեն իրանց կրթական հաստատութիւնները, որտեղ դաստիարակվում է նրանց մատաղ սերունդը։

Վերջերս տեղիս մի խումբ երիտասարդների մէջ միտք յղացաւ կազմակերպել դրամիրաց միութիւն, նպատակ ունենալով բարձրացնել ժողովրդի մտաւորը և զարգացնել նրա կուլտուրական առաջադիմութեան։ Հէնց առաջին քայլից միութեան գործունէութիւնը արգելքի հանդիպեց գիւղի կուլակների կողմից, որոնք չանք չը խնայեցին վարկաբեկ անել միութեան անդամներին, տալով նրանց «անաստուածութիւն քարոզողներ» տիտղոսը. այդ մարդիկ աւելի առաջ գնացին իրանց ամբարտաւանութեան մէջ, երբ միութեան անդամներից մէկը, կամենալով յաւերժացնել իր մօր յիշատակը, քելէխի փոխարէն, 20 ր. նուիրում է ապագայում բացվելիք դպրոցին և ոչ նոր կառուցվող եկեղեցուն։ Այդ արդէն բաւական էր, որ ատիթ ծառայէր զրգռելու ազգէտ ամբոխին դրասնրաց միութեան դէմ, շարժելով նրա ֆանատիկոսութիւնը. վերջապէս միութիւնը ստիպված եղաւ խաչ դնել իր գոյութեան վրա։

Չեմ կարծում, որ լինի մի այլ տեղ, ուր ազիտութիւնը այն աստիճան խոր արմատներ գցած լինի, այնպիսի կործանիչ հետևանքներով արտայայտվի, ինչպէս այստեղ։

Սպանութիւնները, գողութիւնները և, որ աւելի սոսկալին է, «բաղեր կոտրելը» այստեղ էպիդէմիական բնաւորութիւն է ստացել և պարբերաբար շարունակվում են։ Վրէժխնդրութեան վերջին տեսակը քայքայում է հասարակութեան մտտհսութիւնը և քանի գնում՝ մեծ չափեր է ընդունում, շնորհիւ գիւղի թայֆաների գլխաւորների, իշխանների անբարեիղձութեան, որոնք աչքները փակում են այդպիսի ագեղ երևոյթների դէմ և դրանով աւելի նպաստում այդ չարիքի զարգացմանը։ Տարի չէ անցնում, որ սպանութիւն չը կատարվի, բաղեր չը կոտրվեն. այս տարվայ մարտ ամսվայ «բաղերի ջարդը» եկաւ պակելու այդ բոլոր չարագործութիւնները. մի քանի օրվայ ընթացքում կարտվեցին խաղողի 8—10 այգիներ և 500-ից աւելի բարտի ծառեր. թէև չարագործութեան հեղինակները յայտնի են, բայց տուժողները երկիւղի ազդեցութեան տակ լռում են։ Թող չարագործութեան ամբողջ մեղքը ծանրանայ այն պարոնների խղճի վրա, որոնց ձեռքին է այսօր գիւղի դեկը, որոնք հէնց արժատի մէջ խեղդում են ամեն մի կուլտուրական ձեռնարկութիւն, որի հետևանք է այսօրվայ ցաւալի իրողութիւնը, և, որոնք իշխանաւորների դիմակի տակ, մի-մի հրէշներ են։ Բաւական է, պարոններ, շպրտեցէք դիմակները և ներկայացէք հասարակութեան ձեր իսկական գոյնով. հեռացէք ասպարէզից։ Ղարա-գաշ

—

Լագօդաղ, 28 ապրիլի

Ապրիլի 26-ին տեղիս հայոց դպրոցում տեղի ունեցաւ աշակերտական գրական երեկոյթ։ Երկու տեսի սաներն արտասանեցին ոտանաւորներ հայերէն և ռուսերէն լեզուներով, որոնք ընդմիջվում էին խմբական երգչայն երգերով։ Աշակերտ-աշակերտուհիներն աջող ներկայացրին «Էս էլ քեզ հինգ ու խաչ» մանկական կօմէդիան։ Հասարակութիւնը գոհունակութեամբ հեռացաւ։ Մուտքը ձրի էր։

Այս օրերս Լագօդաղ եկաւ Սղնախի նոր գործակալ Եղիշէ Ք. Տէր Աստուածատրեանը իր վիճակն այցելելու։ Նա այցելեց հայոց դպրոցը, ներկայ եղաւ դասերին և գոհ մնաց աշակերտների ցոյց տուած առաջադիմութիւնից։

Թիֆլիսի շերամապ. կայարանն ուղարկել է ագրօնոմ Կ. Աֆրիկեանին շերամապահական պարապմունքները դիտելու։ Պ. Աֆրիկեանը այցելեց, ի միջի այլոց, Կ. Հ. Բ. Ը. Լագօդաղի ճիւղի վարչութիւնը, որ պահում է որդեր 7 ունցայ։ Նա խորհուրդ տուեց ապագայում փոխանակ բոժոժ պահելու՝ սերմացու պատրաստել, որովհետև 6 մխալից կարելի է 200 ր. սերմ ստանալ։ Պարոնը նոյնպէս խորհուրդ տուեց եկեղեցու ընդարձակ բակում տնկել թթենիներ և խոստացաւ նուիրել այս նպատակով թթի ծառեր իր տնկարանից։ Նա կը գնայ և ուրիշ տեղեր։ N. N.

—

Ղուբա, 27 ապրիլի

Ամուսիններ դերասաններ տիկին Էլքահրանոյշ և պ. Շահէն ապրիլի սկիզբներից այստեղ են և մտադիր են տեղիս սիրողների մասնակցութեամբ երկու ամսվայ ընթացքում մի շարք ներկայացումներ տալ։ Ապրիլի 15-ին նրանք խաղացին Ղուբայի կլուբի դահլիճում «Մաբված յոյսեր» կօմէդիան 2 գործող., թարգ. Մարդոյի, որը անցաւ խիստ աջող։

Ապրիլի 12-ին նոյն խումբը խաղաց 3 պիէսներ, այն է՝ «Մարի», Բանաստեղծ» և «Պաշտօնս է խոմփալը»։

Ունենք և ռուսաց խումբ։ Մ. Սալամբէգեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Ապրիլի 27-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի յատուկ ատեանում դռնփակ, դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ, քննվեց Բաղշի Պողոսեանի, Միքայէլ Հայրապետեանի, Սարգիս Պողոս-Բէգեանի և Թէոս Հայրապետեանի գործը, որոնք մեղադրվում են «Դաշնակցութիւն» կուսակցութեանը պատկանելու մէջ, որով իրանց ձեռքի տակ ունեցել են պայթուցիկ նիւթեր։

Բաղշի Պողոսեանին և Միք. Հայրապետեանին դատարանը դատապարտեց 3 տարով բանտարկութեան, հաշուելով նախնական բանտարկութեան 2 տարին, իսկ Սարգիս Պողոս-Բէգեանին և Թէոս Հայրապետեանին՝ աքսորի։

—

Ապրիլի 27-ին Թիֆլիսի նահանգական դատարանում դռնփակ քննվեց Գլուշկովի գործը, որ մեղադրվում էր 14-ամեայ օրիորդ Ալ. Վ.-ին բռնաբարելու մէջ։

Պաշտպանում էր իշխ. Անդրոնիկովը։ Օրիորդի քաղաքացիական պահանջը պաշտպանում էր Դ. Զաւարովը։

Դատարանը մեղաւոր ճանաչեց Գլուշկովին 1525-րդ և 1528-րդ յօդուածներով և դատապարտեց նրան 5 տարով բանտարկութեան՝ որոշելով նրանից պահանջել ամսական 5 ռուբլի օրիորդի օգտին, մինչև սրա ամուսնանալը։

Գլուշկովը ոստիկանութեան հսկողութեան տակ է 1000 ռուբլի գրաւականով։ («Т.Л.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսարանը արտաքին գործերի մինիստրից ստացել է այս բովանդակութիւնը կրող հեռագիր. «Նորին մեծութիւն շահի հրամանով նոր կաբինէտը բաղկանում է՝ պրինց Ֆէրման-Ֆէրմը՝ ներքին գործերի մինիստր, Ամիր-Նիզամը՝ ֆինանսների մինիստր, Մուշիր-ուլ-Դովլէն՝ արդարադատութեան մինիստր, Մօստաֆի-ուլ-Մէմալիքը՝ զինուորական մինիստր, Մոտամին-ուլ-Մուլքը՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստր, Մօխանդէ-ուլ-Մէմալիքը՝ ճանապարհների հաղորդակցութեան մինիստր, Մօխբիր-ուլ-Դովլէն՝ պօստ-հեռագրական մինիստր, Սադ-ուլ-Դովլէն՝ արտաքին գործերի մինիստր։ Նորին մեծութեան հրամանով մինիստրները բաւականաչափ կրթված և լիբերալ աշխատակիցների աջակցութեամբ կազմում են պետական խորհուրդ, որքան կարելի է շուտով ընտրողական օրէնք մշակելու համար այն հաշուով, որ ընտրութիւնները սկսվեն ամբողջ պետութեան մէջ միաժամանակ և որպէսզի ժողովրդական ներկայացուցիչները կարողանան մայրաքաղաք գալ. և հէնց որ ժողովի նրանց երկու-երրորդ մասը, պարլամենտը կը բացվի։ Նորին մեծութիւնը բարեհաճեց ողորմածութեամբ ընդհանուր ամնիստիա շնորհել բոլոր քաղաքական բանտարկեալների համար և յայտարարել, որ հայրենիքից բոլոր փախստականները իրաւունք են ստանում վերադառնալ անպատիժ»։

✦ Մոսկվայի բնագիտական-դիտական գիտութիւնների տարածման ընկերութիւնը ամառս կազմակերպում է մի էքսկուրսիա դէպի Կովկաս։ Վլադիկավկազի երկաթուղու Դարկ-Կօխ կայարանից ճանապարհորդողները անցնելու են Ալագեր, ապա ռազմական ճանապարհով՝ Քութայիս, այստեղից՝ Բաթում, ապա Սև-ծովի ափերով Նովոռոսսիյսկ։ Ճանապարհորդութիւնը տեւելու է մի ամիս։

✦ Դեղարուեստը հովանաւորող ընկերութեան Կովկ. նկարչական դպրոցում մայիսի 6-ին բացվելու է անուանի նկարիչների գործերի պատկերահանդէս, որ կազմակերպել են Մոսկ. ակադէմիայի երեք ուսանողներ։ Նկարները եղել են Պարիզի, Պետերբուրգի և Մոսկվայի ցուցահանդէսներում և առաջին անգամն է, որ ցուցադրվում են Թիֆլիսում։

✦ «Գաուկազիշէ Պոստ» գերմանական շաբաթաթերթի վերջին լոյս տեսած համարում (№ 44) զետեղված է թերթի խմբագիր՝ հայ ընթերցողներին ևս յայտնի՝ Արթուր Լէյստի մի գեղեցիկ թարգմանութիւնը՝ Սայաթ-Նովայից։

✦ «Բ. Ե.» № 92-ում զետեղված է թերթի սեփ. թղթակցի հաշիւը հայ տնայնագործական համագումարի աշխատանքների մասին. թղթակիցը ի միջի այլոց ցանկութիւն է յայտնում, որ տեղական տնայնագործական զանազան ճիւղերի ներկայացուցիչները գնահատելի համագումարը, որտեղ նրանք շատ բան կարող էին սովորել։

✦ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան գործակալների տեղեկութիւններից երևում է, որ Քութայիսի նահանգում հացի բերքը անբաւարար է, իսկ խաղողի բերքը խոստանում է այս տարի շատ առատ լինել։

✦ Նահանգական ատեանը լեկիլ է քաղաքային գումայի որոշումները թիւրքահպատակ Սարգսեանին և Բարսեղեանին 75 և 237 ր. 50 կ. նպաստ տալու մասին. ատեանը վաւերացրել է միայն Մխիթարեանին որոշած 262 ր. 50 կ. նպաստը, որ նշանակվում է այն պատճառով, որ նա հրաժարվում է պաշտօնից հիւանդութեան պատճառով։

✦ Պետերբուրգի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը որոշել է կովկասեան հանքային ջրերում սանատորիա հաստատել։

✦ Թիֆլիսի քաղաքային սանիտարական բժշկական մասնի տեղեկութիւնների համաձայն, Թիֆլիսի նահանգական և Մետէխի բանտերում երևացել է տիֆ հիւանդութիւնը, որով արդէն հիւանդացել են 30 հոգի։

✦ Թիֆլիսում ապրիլի 29-ից լոյս է տեսնում ռուսերէն լեզուով մի աշակողմեան օրաթերթ «Русскій съ Кавказа» անունով։

✦ Ապրիլի 29-ից լոյս է տեսնում վրացերէն լեզուով նոր լրագիր «Զվէնի Ազրի» անունով (Մեր միտքը)։

✦ Բաթումից «Зак.» թերթին հաղորդում են, որ ապրիլի 26-ին Կովկասեան գեղատան ապրանքների վաճառատնից անյայտ մարդիկ գողացել են 1800 ռուբլու դրամ և զանազան թղթեր։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

—

✦ Մի քանի օր սրանից առաջ Պետերբուրգի ուսումնարանակ. շրջանի հոգաբարձուի ժամ կայացել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող գիմնազիաների ու ռէալական ուսումնարանների վերատեսուչների ժողովը՝ քննելու միջնակարգ դպրոցների ուսուցիչների վրա հսկողութիւն կազմակերպելու հարցը։ Վերատեսուչների վրա պարտաւորութիւն է դրված իւրաքանչիւր ուսումնարանական տարվայ վերջում հաղորդել իրանց ուսումնարանների ուսուցչական խմբի անդամների մասին գաղտնի բնաւորութիւն ունեցող տեղեկութիւններ։ («Н.В.»)

✦ «Русское Знамя» և «Колоколъ» լրագիրները իրանց բարձրատիճան հովանաւորողներից ստացել են խոշոր նպաստներ. շնորհիւ այդ հանգամանքի յիշեալ թերթերի գոյութիւնը բոլորովին ապահովված է։

✦ Մոսկվայի գումայի ձայնաւորներից մէկը հարց է յարուցել Վ. Գ. Բէլինսկու ծննդեան 100-ամեակը առաջիկայ 1910 թի մայիսի 30-ին տօնելու մասին։ Այդ առիթով Ս. Ա. Վենգերովը «Рѣчь» լրագրի մէջ անհերքելի փաստաթղթերով ապացուցանում է, որ Բէլինսկին ծնվել է 1811 թի մայիսի 30-ին, և հետևապէս 100-ամեակը լրանում է 1911 թի մայիսի 30-ին։

✦ Ինչպէս յայտնի է, Իոլլոսին սպանող Թէոդորովին Ֆրանսիական կառավարութիւ-

նը համաձայնվել է յանձնել ռուսաց կառավարութեանը։ Նրան, ի միջի այլոց, մեղադրութեան են «ոսիզնիկ» կազանցեվին սպանելուն համար։ Վերջինս, ցոյց տալով իրան իբրև յեղափոխական, դրդել էր Ֆէօդորովին սպանել Իօլլոսին, որից յետոյ Ֆէօդորովը, իմանալով իր սխալը, սպանել էր նաև կազանցեվին։

✦ Հերցէնշտէյնի դատավարութեան ժամանակ Պրուսակովի արած մերկացումները մեծ աղմուկ են յարուցել իսկական ռուս մարդկանց շրջանում։ Սօիւզնիկները սպառնում են Պրուսակովին, որը Դուբրովինի նախկին քարտուղարն էր, ենթարկել ինքնադատաստանի։ Բացի դատաստանական այդ մերկացումներից, Պրուսակովը յայտնի է նաև «Դոկտոր Զուբրովին և ընկ.» գրքոյկով, ուր նա ցուցադրում է «ռուս ժողովրդի միութեան» գաղտնիքները։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Անուխա գիւղ (Սուխ. շրջ.), 23 ապրիլի

Սրանով ուղարկելով ձեզ 36 ռուբ. 30 կ., խնդրում եմ այդ գումարը յատկացնէք Զէյթունի սովեալների օգտին, որ, իբրև բարոյական պարտք, նուիրել են հետեւեալ անձինք. Պօղոս Զատիկեան 10 ռ., Էջմա Զատիկեան 1 ռ. 50 կ., Խաչիկ Կէտեանց 5 ռ. 50կ., Նազար Ուստեանց 6 ռ., Մարիամ Աշըղեանց 3 ռ., Նշան Ուստեանց 3 ռ., Զատիկ Սարեանց 1 ռ., Պօղոս Աւճեանց 1 ռ., Ռուբէն Գասպարեան 1 ռ. և Աւետիս Չէլիկեան 50 կ.։ Ի միջի այլոց՝ գիւղի հոգաբարձութեան նախագահ պ. Խաչիկ Կէտեանը հանգանակել է զանազան անձերից կս 3 ռ. 80 կ.։ Ընդհանուր գումարն է 36 ռ. 30 կ.։

Պօղոս Զատիկեան

—

Էջմիածին, 26 ապրիլի

«Գոլոս» № 84-ում Գէորգեան ճեմարանի 15 «բողոքող լարանցիների» կողմից հանդէս է եկել ոմն Աղաջանեան և, սուտ յայտարարելով «Մշակի» № 82-ում լոյս տեսած իմ թղթակցութիւնը, առաջարկում է ինձ մինչև մայիսի 3-ը դուրս գալ միջնորդ դատի առաջ, հակառակ դէպքում, o sancta simplicitas!, սպառնում է ինձ որպէս զրպարտիչ ճանաչելու։ Սրանով յայտնում եմ Աղաջանեան կոչված պարոնին և իր ընկերներին, որոնք, թղթակցութեանս ամբողջ իմաստն ըմբռնելու ընդունակութիւնը միանգամայն կորցրած լինելով, այնպիսի նրբազգաց քնքշութեամբ պաշտպան են հանդիսանում վանքի ինտրիգաններին, որ իմ պատւոյս ստոր եմ համարում Աղաջանեանների պէս անձանց հետ գործ ունենալ միջնորդ դատի առաջ։ Եթէ վերոյիշեալ պարոնները իրանց վիրաւորված են զգում և իմ գրածները զրպարտութիւն, ես նրանց հրաւիրում եմ նոյն պ. Աղաջանեանի միջոցով դիմելու պետական օրինական դատարանին, որի առաջ ես կապացուցանեմ ոչ միայն վերջին թղթակցութեանս մէջ գրածները, այլև բաց կանեմ շատ բաներ, որոնք մինչև օրս ես անյարմար էի գտնում դեռևս դիտելու մամուլի էջերում։ Ուրեմն պ. Աղաջանեան, դուրս եկէք կղերական փեշերի տակից ու դիմեցէք օրինական դատարանին, որի առաջ միայն ես կը տամ ձեզ արժանի պատասխանը։ Ինչպէս տեսնում էք, ես չեմ խուսափում դատից։ Նիմանդ

—

Ախալցխա, 23 ապրիլի

«Մշակի» № 81-ում Ախալցխայից գրված լուրերն պ. Libre-ն կցում է նաև հետեւեալը. «Մշակի» № 76-ում գրված Ախալցխայից պ. Մուրադ-Ասպետի նամակը (փոխանակ՝ լուրը) իր մէջ պարունակում է անճշտութիւններ։ Եւ իբրև փաստ մէջ է բերում միայն մէկը (ինչու), այն, որ գր. ընկ. Նորընտիր վարչութեան վերջին ընտրութիւնը եղել է ապրիլի 5-ին և ոչ թէ մի ամիս առաջ, ինչպէս ես գրել էի «Մշակում» դեռ ապ. 4-ից։ Թող պ. Libre-ն հետաքրքրվի և իմանայ թէ մարտի 8-ին, երեկ. ժ. 8-ին, ընկերութեան 27 անդամների մասնակցութեամբ ընտրվո՞ւել է նոր վարչութիւնը թէ՞ ոչ (բացի մէկից, որին ընտրելու էր սիրողների ժողովը), որոնցից միայն 2-ը նոր մարդիկ էին, իսկ մնացածները նախկին վարչութեան (վերընտրված) անդամներ։ Բայց եթէ դրանցից՝ ապօրինի երաշխաւորութեամբ ընտրված երկու նոր անդամները այլ և այլ պատճառներով հրաժարվեցին՝ մինթէ մնացած, ու էլ հին, անդամները անձեռնհաս էին ներկայացում կազմակերպելու. չէ՞ որ ներկայացումների գործը կանգ է առել, իսկ սէզօնն էլ անցնելու վրա է։ Ինչում պիտի կայանար նորընտիր վարչ. գործունէութիւնը, եթէ ս. Սիրանոյշը պատահմամբ չը համաձայնվէր Ախալցխա գալու։ Շատեկան է այստեղ յիշելու և այն, որ պարոնը յայտարարել էր, թէ ապրիլի 20-ին անպայման գալու է ս. Սիրանոյշը, բայց ահա 23-ն է՝ դեռ չէ եկել։ Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թէ ստացող յանձնողական ժողովը ուշ է տեղի ունեցել՝ և այն՝ մի քանի հրաւիրաթերթեր և բանկներ ստանալու համար հին վարչութիւնից՝ (պիէսաները վերընտրված անդամներից մէկի մօտ է) դեռ փաստ չէ, թէ վարչութիւնը մարտի 8-ին չէ ընտրվել և չէր կարող ներկայացումներ տալ։

Մուրադ-Ասպետ

—

Թիֆլիս, 24 ապրիլի

«Մշակի» 1907 թ. № 84-ից յայտնի էր, որ Թիֆլիսի առաջնորդը մի շրջաբերական հրամանով եկեղեցու դպիր-սպասաւորներին՝ նախ ազատել էր քահանաների քմահաճոյքով պաշտօնի ընդունվել և արձակվելուց, երկրորդ քահանաները բնաւ չը պիտի միջամտէին ծխականներից արդիւնք ստանալու միջոցին։ Բայց, դժբաղդաբար, առաջնորդի այդ կարգադրութիւնը չէ իրագործվել, և դպիրներից շատ քչերն են զոհ իրանց քահանաներից...

Բացի դրանից մեր պ.-պ. երեցփոխներից ոմանք էլ սկսել են զրկել մեզ՝ ռոճիկ չը տալով, և դրան իբր պատճառ զանազան առարկութիւններ անելով։ Այդպիսի երեցփոխներից են Թանդոյեան, ս. Նշանի, Վերայի և այլ եկեղեցիների երեցփոխները, որոնք իրանցից կախումն ունեցող թշուառ սպասաւորներին զրել են յուսահատ դրութեան մէջ։ Մեր ռոճիկները միջին թւով 10—15 ռուբլուց չէ անցնում, թէև կան և 4—5 ռ. ստացողներ (ամսական). իսկ ծխ. արդիւնքներ ստանում ենք քահանաների ստացածի մէկ հինգերորդ մասը, այդ էլ երբեմն խուզվելով, մկրատվելով և շարաթներ քահանայի գրպանում թուխս նստելով։ Ահա մենք մօտ 45—50 հոգի եկեղեցու սպասաւորներս, որ ապրում ենք քաղաքիս նոյն բարդ ու թանգ կեանքում, ուր ապրում են և ամենքը, դատապարտված ենք ամբողջ ընտանիքով և որդոցով՝ կարիքի խեղդող ճիրաններում մնալու։

Յայտնելով մեր աւելի քան ծանր դրութեան մասին թէ հայ հասարակութեան և թէ հոգևոր իշխանութեան՝ խնդրում ենք բարեւաւել մեր հարստահարվող դասակարգի դրութիւնը, ազատել քմահաճոյքներից, և ստեղծել տանելի պայմաններ։

Մի խումբ դպիրներ

—

Էջմիածին, 23 ապրիլի

Յատկապէս խնդրում եմ հրատարակել սրբազան սինոդին մատուցած յայտարարութիւնս ամսիս 22-ին, որպէս պատասխան «Մշակի» այս տարվայ № 76-րդ համարում տպագրված թղթակցութեան, 804 ռուբլի կօպէկագրամ կոչված արդիւնքից իմ ձեռս հասած գումարի մասին, որով արդարութեան պարտք կատարած կը լինէք։

Սուքիաս արք. եպիսկոպոս Պարզեան

Լուսաւորչական հայոց սրբազ. սինոդի ս. Էջմիածնի

Ի միաբանէ Մայր Աթոռոյ

Յայտարարութիւն

Յ-76-րդ համարոյ «Մշակ» լրագրոյ տարւոյս տեղեկացայ զվճռոյ սրբազան սինոդիդ, զի ճանաչելով զիս ապօրինաբար ստացող 804 ռուբլի կօպէկագրամոց, այնու հանդերձ բարեհաճեալ է որոշել միջնորդ հանդիսանալ առաջի նորընտիր կաթուղիկոսի յաղագս անհետեւանք թողլոյ զխնդիրդ։ Անպատուաբեր համարելով զայն վասն իմ՝ և անուղղադատ վասն հոգևոր բարձրագոյն տաճարի՝ գրութեամբ ի 18 ամսոյս խընդրեցի ի գերազնիւ դատախազէ գործն չարձակել զայն օրագիր՝ մինչև կ՝կին բացատրութեամբ յանդիման լինել տաճարի։ Անպատուաբեր ասացի վասն իմ, զի յեսթանասունամեայ հասակի, զամս յիսուն ծառայեալ ի զանազան պաշտաւունս և անծանօթ բնաւին երկասց ազգընտիր հայրապետի անհանդուրժելի համարիմ որպէս յանցաւոր, և այն ի գրամական հաշուս, միջնորդութեամբ գորին ընդ իսկ և իսկ ժամանել նորին սրբութեան ապաստանիլ շնորհաց։ Անուղղադատ և վասն ս. սինոդիդ, ըստ որում գոյն ունելով առաջի աչաց զգբաւոր հաւատարանութիւնս վիճակային կօնսիստորիային հայոց Երեւանի ի յայտարարութեան ի 10 դեկտեմբերի 1908 ամի ընդ համարաւ 5105. «Նախքան 1906 ամն փոխանորդք ինքեանք գանձէին վկօպէկագրամս ի ձեռն գանձապահաց և գործադրէին յինչ պէտս և կամէին, առանց պահելոյ զհաշիւ ինչ և մասնակցելոյ կօնսիստորիային». զբարձրս կօպէկագրամոց ի 1903 թուականի թիւրագատութեամբ յանցաւոր համարի առաջի անօրէնութեանց դորին՝ սահմանեալ երեք ամաւ յետոյ քան զգործողութիւնն։ Նոր և անծանօթ են ինձ օրէնաց և կանոնաց ունել զյետադարձ ներգործութիւնս. մանաւանդ թէ անգիտակ եմ՝ յիմամէ պարտ էր ինձ խնդրել զթոյլտուութիւն բարձման դրամոցդ, երբ դանձումն և գործադրութիւն արդեանցդ ընդ իսկոյն տեսչութեամբ էր և զհամաթուեալ ընդ վիճակային և աթոռային եկամուտս։

Թէպէտ և չհամարիմ ինձ իրաւունս հարցանելոյդ լինել՝ ընդէ՞ր վճռահատութիւնք գերագոյն հոգևոր տաճարի՝ չեն ևս ածեալ ի կատար, հանին ի հրապարակ լրագրական հրատարակութեանց, կամ ով այն ոք է՝ որ զիտակ հանդիսացեալ տնօրէնութեանց դորին—կայացեալ ի 6 ամսոյս վասն 804 ռուբլեաց—յ-8 սորին հանէ յերևան ի հասարակաց լսարան, սակայն և այնպէս՝ չկարեմ թագուցանել զզարմանս ընդ նորօրինակութիւն գործողութեանցդ ի հոգևոր շրջանի։ Եւ կարի յիրաւունս, հաճելի է ձեզ, սրբազան հարք և պատուաւոր ժան եղբարք, որպէս դատաւորք յաթոռ բազմեալ՝ յընպարտս դատապարտել զիս առանց մանրամասն հարցափորձի՝ որ արտանեալ է անգամ եղեռնագործ յանցաւորաց, և ապա խոստանալ ստանձնել զտարապայման միջնորդութիւն առաջի վեհափառ կաթուղիկոսի։ Ներեսցի ինձ վկայել։ այսօրինակ վարմունք ծաղր և արհամարհութիւն խոստովանի խոհական ուղղամտութեան և ողջադատ բանականութեան։

Յետ յայտնելոյ զանբաւականութիւնս ընդ անարդար որոշումն տաճարի՝ յարգոյաբար ծանուցանեմ—որպէս յաւելուած յայտարարութեանս ի 20 մարտի տարւոյս—նախ՝ ըստ փոխանորդական ռոճկաց ունէր հաստանել ինձ յընթացս երկուց ամաց և երկուց ամսոց բացակայութեանս 4360 ռուբլի. ըստ որոշման կառավարութեան 2600 ռուբլի, ըստ հասոյթից միաբանի սրբոյ աթոռոյս 1300 ռուբլի, եթէ յաւելցին ի սոսա այլ ևս նոյնքան զրամք՝ որպէս ի վարձ բնակարանի և ի ծախս անդեան իմ և միոյ սպասաւորի, որովք շահի անձնիւր միաբան մայրանիցս, դարձեալ լինի գումար 2600 ռուբլի։ Եւ այս չէ անիրաւ ինչ պահանջ, վասն զի օրինական կարգաւ չէի արձակեալ ի փոխանորդական պաշտօնէ. իսկ յայսպիսի հանգամանս գտեալ վիճակաւորք ստացեալ են զամբողջ հասանելիս ինքեանց ի վիճակային արդեանց։ Ստացեալ և են այնպիսի միաբանք՝ որք տարեւոր ժամանակօք գտեալ են ի բացակայութեան։ Նմանօրինակ իրողութիւնք յայտնի են սրբազան սինոդիդ և՝ սիրահայեաց ակնարկութեամբ հաւանեալ ընդ այնս, օրինական համարեալ է։ Ուրեմն, ինձ չպարտի զլանալ արտօնութիւնդ։ Թէպէտև բնաւին չեմ ի խնդիր ելեալ ռոճկի և մնդադրամոց, ոչ բանիւ և ոչ գրով, այլ որքան ինչ գոյն ստմանեալ է՝ ի հետեւումն յայտարարութեան վանական կառավարութեան, ստացեալ եմ գոհունակութեամբ։ Վերստին հայցեմ, որպէս ի նախորդ յայտարարութեանս, «եթէ չընկալեալ գումարդ անհրաժեշտ է վերադարձուցանել թեմական ատենին Երեւանի՝ բարեհաճեսցի գոյնն ի վիճակային կամ յաթոռային արդեանց լիապէս ստանալ զհասանելիսն ինձ՝ յորոց զ804 ռ. բառնալ և առաքել ուր արժանն է։ Այսպէս անօրինելով սրբազան սինոդիդ՝ զարդարութեան առնէ վճար և ազատի յանախորժ հարկէ միջնորդութեան առ սրբազնագոյն քահանայապետ ազգիս։

Եւ երկրորդ՝ առ ի հանել ի թիւրիմացութեանց զատենակալս դորին՝ ասել առեմ, կօպէկագրամ արդիւնք սահմանեալ են ի ժամանակս յառաջ քան զիս փոխանորդաց, այլ թէ ինչ, որոյ անօրէնութեամբ և յինչ պէտս ծախեալ են նոքին, ինձ չէ յայտնի որոշակի։ Յաւուրս իմոյ կրկնակի փոխ-թեմակալութեան յԵրևան՝ ընդ ձեռն գանձապահաց ամենայն հաւատարմատարութեամբ գանձեալ և մուծեալ են ի ժապաւենեալ մատեան—վաւերացուցեալ առաջնորդական կնքով։ Այդու արդեամբք կառուցեալ են կցորդական շինուածք փոխանորդարանին, պաշտամբին, թեմական ատենին և պարիսպք պարիզին այլովքն հանդերձ՝ որովք հասեալ է խնայողութիւն աթոռապատկան, եկեղեցական և վիճակային արդեանց առ նուազն վեց հազար ռուբլեաց չափով։ Բաշխեալք են յանդամ քահանայս կօնսիստորիային և և ի զրագիրս ըստ իւրաքանչիւրոցն արժանեաց յամի ամի ի գումար—այդ պարզեք. իսկ ես նուաստութիւն անձին գտեալ եմ ձեռնաձիգ ի նոսա լինել, շատ իսկ հաժարեալ զռճկագրամս։ Նուաստութիւն հաժարեալ եմ նաև ի ժամանակս երկուց հանգուցեալ հայրապետաց զգումար ինչ պահանջել յէջմիածնական, եկեղեցական և թեմական արդեանց ի ծախս երթ ու գարձի նոցին և կամ ի սիրաշահութիւն հիւրոց։ Զայսցանէ կարէ դոյնն տալ քաղել զիսկաքանչ և մանրամասն ծանօթութիւնս ի դիւանէ իւրմէ և ի կօնսիստորիայէն։

Ի կնիք բանիցս ոչ անդէպ համարիմ մատուցանել ի բարեհաճութիւն ատենակալացդ զթերթ ծախուցս ի վարձ բնակարանի և ի գին կահ-կարասեաց նորին՝ որք—յաւուր ելին յՕրէնբուրգ քաղաքէ—դրեան թէ բաշխեցան ի ծանօթս պատճառաւ չմոռանալոյ ի նոսա գնողաց։ Բայց ի դմանէ յառաջիկայութեան արժանապատիւ քննիչ տէր Բենիկ վարդապետի, տաց զրանաւոր բացատրութիւնս վասն հանգամանս անկանելոյ ի ձեռս իմ դժբաղդ 804 ռուբլի կօպէկագրամոցդ՝ զորս անյարմար դատեցայ ի գիր դրոշմել։

Սուքիաս արքեպ. Պարզեանց

ի 22 ապրիլի 1909 ամի

ի սուրբ Էջմիածին

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

29 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Ֆէնիկս» մեքենաշինարարական գործարանում գաղանաբար սպանվեց գործարանի կառավարիչ ինժենէր Գիւտոնը 17-ամեայ արձակված բանուորի ձեռքով։

Օրվայ ընթացքում խօսերայով հիւանդացաւ 2, մեռաւ 1 մարդ։

Սենատի այսօրվայ նիստում Լօպուխինի գործի առիթով կարդացվեցին մի անյայտ մարդու երկու նամակները, որոնք գտնվել են Մօսկվայում յեղափոխականների մօտ խուզարկութիւն կատարելու ժամանակ։ Նամակներում ասված է, որ Ազէֆը պրօվոկատոր երևաց և որ նրա մերկացումը արեց Բուրցեվը Լօպուխինի աջակցութեամբ։ Ժամը հինգին սկսվեցին կողմերի վիճաբանութիւնները։ Լօպուխինը վերջին խօսքում ի միջի այլոց ասաց, որ չէր կարող հաւատ չընծայել Բուրցեվին և չը յայտնել Ազէֆի տերրօրիստական սպանութիւններ կատարելու մտադրութիւնների մասին, իսկ հաւատալով՝ հնարաւոր չը գտաւ լռել։ Յեղափոխական-կուսակցութիւնների հետ ոչ մի բանով կապված չէ եղել։ Յայտարարվեց ընդմիջում։

ՄՕՍԿՎԱ. Գօղոլի հանդ՝սի առիթով կազմված բանկետին ներկայ էին 800 մարդ։ Առաջին բաժակը քաղաքագլուխն առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը։ դահլիճը թնդաց ազգային օրհներգից։ Համալսարանի ըէկտոր Մանուիլովը, ողջունելով Ֆրանսիացի հիւրերին, առաջարկեց գեղեցիկ Ֆրանսիայի կենացը։ Երիցս կրկնվեց մարսելիոզը, յետոյ ռուսաց օրհներգը։ Առաջարկվեցին բաժակներ օտարազգի պետութիւնների ներկայացուցիչների կենացների համար։ Վերջում շնորհաւորական հեռագիր ուղարկվեց Տօլստոյին։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Ֆրանց Յովսէփ կայսրը մեկնեց Վիէննա։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Գուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Ն. Տ. ՄՈՒՐԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Մ. ՏՈՒՐԲՕՎԻՉ—1½—2 ժ. մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Օ. Վ. ԳԵՅԵՎՍԿԱՅԱ-ԷՆԳԵԼ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։

Ի. Ֆ. ՄԱՐՅԻՇԵՎՍԿԻ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հիւանդների բաժանմունքով

Թիֆլիս, Եկատերինինսկայա փ., 79, տել. 1026.

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր.

ՄԻՔ. ԱՂԱԶԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդ. (երկուշ., չորեքշ., ուրբ.)։

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը ջղային և ներքին հիւանդութիւններ։

Մ. Գ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։

Ս. Ա. ԼԻՒՐԻ—առ. ժ. 11—12-ը քթի բրգի և ականջի հիւանդութիւններ։

Գ. Ն. ՄԱՂԱԲԵԱՆ—առ. ժ. 10—11-ը ներքին և երեխաների հիւանդութիւններ։

Մ. Ե. ՄԱԶԱՐԷՆՈՒԼՕՎ—ցեր. ժ. 1—2-ը կաշուի և սիֆիլիսի հիւանդութիւններ (երեքշ., հինգշ., շաբաթ)։

Լ. Մ. ՄՕՆԻՆ—ցեր. 1—2-ը կանանց հիւանդ. և մանկաբարձ.։

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնոզով։ Միկրօսկոպական, բակտերիօլոգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումներ։ Ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կօպէկ։ Օպերացիաները և համախորհրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից։

(*կ. ե. ու.*) 236. 100—15

ԲԺԻՇԿ

Ա. Ս. ԱՄԻՐԽԱՆԵԱՆ

Ներքին հիւանդութիւններ

Ընդունելութիւն ամեն օր { 11—12 ժ. առաւ. / 5—6 ժ. երեկ.

Վելիամինովսկայա փող., № 10.

(*օ. մ.*) 100—78

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Սիֆիլիս, վեներական, միզասեռական եւ մորթ. ցաւեր

Ընդունելութիւն ամեն օր { 12—2 ժ. ցեր. / 5—7 ժ. երեկ.

Սօլոլակայա փողոց № 33.

(*օ. մ.*) 100—73

ԲԺԻՇԿ

Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ

Վերադառնալով՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։

Ներքին և ջղային հիւանդութիւններ։

Առանձնապէս՝ սրտի և թոքերի։

Ընդունելութիւն՝ { առաւօտեան ժ. 10—12-ը. / երեկոյեան ժ. 5—6-ը.

Սօլոլակայա փող., № 6, տ. Միրզոյեվի։

(*օ. մ.*) 344. 100—58

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(*8, մ. 1*) (М. 125905.)274. 2—2

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"

Միայն Մ. ԼԵՐԷԴԵՎԻ

«Этикетъ утвержденъ прав.» մակագրութիւնով.

Գլխաւոր պահեստատեղը Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաղու, Բաթում։

(*10, 20, 30*) 50—44

Մանկաբարձուհի եւ մասնաժիս

Հ. ՍԱՆԹՈՒՐԵԱՆ-ԴԱՒԹԵԱՆՑԸ

Ընդունում է ծնունդներ և բժշկում է բժշկի խորհրդով կանացի հիւանդութիւններ, սրսկում է կանանց, տղամարդկանց և երեխաների կաշուի տակ թէ իր և թէ հիւանդների մօտ մատչելի գնով։ Գաւառացիներին տալիս դիւրութիւն և խորհուրդներ կանանց հիւանդութիւնների վերաբերմամբ։

Ընդունելութիւնը ամեն օր ժամը 12—1-ը, իսկ կիրակի օրերը պատուաստում է ծաղիկ։ Հասցէն՝ Петхаинскій подъемъ № 4, д. Симонянца.

(*հ. կ.*) 51. 50—34

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Ա. ՋԱՆԵՍՅԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՐԳԸ

Դիմել գրավաճառներին։

(*օ. մ.*) 324. 6—6

«ՄՇԱԿԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փոխարէն 10 ռուբլի 70 կօպէկի

միայն 6 ռուբլի 70 կ.

Կամենալով «Մշակի» բաժանորդներին և ընթերցողներին հնարաւորութիւն տալ էժան կերպով ձեռք բերել 1) «Մեսրոբեան Հանրամատչելի Գրադարանի» հրատարակութիւնները և մեր աշխատութիւնները, 2) Գ. Արծրունու երկերի առաջին հատորը, 3) Վրթիի «Մանրանկարները», մենք որոշեցինք հետեւեալ գրքերը տարածել էժանացրած գներով։

1. Գրիգոր Արծրունու Երկերը, հատոր առաջին, գինն է 1 ռ. —
2. «Մանրանկարներ» Վրթիի, գինն է 1 ռ. 50 կ.
Հ. Առաքելեանի ինքնուրոյն և թարգմանական աշխատութիւնները և «Մեսրոբեան Հանրամատչելի Գրադարանի» հրատարակութիւնները.
3. «Անդերսէնի հեքիաթները», թարգմ. Տ. Զաւէնի, գինն է — 50 կ.
4. «Արբեցողութեան դէմ», բրօշիւր, գինն է — 15 կ.
5. «Հայկական Տպագրութիւն», Լէօր, գինն է 1 ռ. 20 կ.
6. «Զհուպ-Քուշան», Շահրիարի, մեծ վէպ Պարսկաստանի կեանքից, գինն է 1 ռ. —
7. «Ուրանիա», աստղագիտական մեծ վէպ Ֆլամմարիօնի, թարգման. Հ. Առաքելեանի, գինն է 1 ռ. 50 կ.
8. «Քսան Վէպիկներ», Դի դը Մօպասանի, թարգման. Հ. Առաքելեանի, գինն է 1 ռ. —
9. «Անգլիայի հասար. և քաղաքական կեանքը», գինն է — 15 կ.
10. «Հասարակութեան նեցուկները», դրամա Հ. Իբսէնի (պատկերով), թարգմ. Լ. Բաբայանի, գինն է — 15 կ.
11. «Դէպի Արարատ», Արշ. Մխիթարեանի, գինն է — 40 կ.
12. «Մի ամիս Արեւելքում», Հ. Առաքելեանի, գինն է — 40 կ.
13. «Նոր կեանքի Շեմքում», դրամատ. էտիւդ Ա. Բ. — 40 կ.
14. «Միլտոնի կեանքը», կազմեց Հ. Առաքելեան — 25 կ.
15. «Գալիլէյի կեանքը», կազմեց Հ. Ա. — 25 կ.
16. «Զեռնարկ Տրամաբան., Հոգեբ., Բանահիւսութեան», կազմեց Հ. Առաքելեան, գինն է — 50 կ.

Բոլոր այս 16 գրքերն, որոնց արժէքն է 10 ռ. 70 կ., կարելի է ստանալ, ուղարկելով միայն 6 ռ. 70 կ., որի մէջ և ճանապարհածախքը, իսկ առանց ճանապարհածախքի, Թիֆլիսում կարելի է ստանալ 5 ռ. 50 կ.-ով։

Դրամ և պատուէր պէտք է ուղարկել այս հասցէով Тифлисъ, редакція газеты «Мшакъ», Амбарцуму Аракеляну.

(*օ. մ.*) 268. 10—9

Լոյս տեսաւ և վաճառվում է

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ"

գրախանութում

Հ. ԱԴՈՆՑ

Арменія въ эпоху Юстиняна.

Политическое состояніе на основѣ нахараркаго строя.

Тексты и разыскиванія по армяно-грузинской филологіи. Кн. XI.

Գինը 4 ռ. 50 կ. պօսի ծախքով։

Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ", Г. И. ГАЛУСТЯНУ.

Գրացուցակը ուղարկվում է ձրի։

350. 3—3

Электропечатня Н. Г. Аганьянцъ

Полицейская 7.